

34-35(572-573)
23.12.2019
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԹԱԽՇՈՒՄ ԿՅԱՆՔԸ ՄՏՆՈՒՄ Է ԲՆԱԿԱՆՈՆ ՀՈՒՆ



Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը դեկտեմբերի 13-ին այցելել է Մարտակերտի շրջանի Թախշ գյուղ եւ անցկացրել աշխատանքային խորհրդակցություն՝ նվիրված գյուղում իրականացվող աշխատանքներին: Երկրի ղեկավարը համապատասխան ցուցումներ եւ հանձնարարականներ է տվել շահագրգիռ մարմինների ղեկավարներին՝ աշխատանքների պատշաճ իրականացման ուղղությամբ:

Նույն օրը Բակո Սահակյանն այցելել է Մեծ շեն գյուղ, որտեղ ծանոթացել է համայնքում կատարվող ճանապարհաշինարարական աշխատանքների ըն-

թացքին: Մարտակերտի շրջան այցի ընթացքում Նախագահն այցելել է նաեւ Թախշ, Մեծ շեն եւ Մատաղիս գյուղերի դպրոցները, հանդիպել ուսուցչական կազմերի ու աշակերտների հետ: Հանդիպումների ժամանակ քննարկվել են դպրոցներում առկա խնդիրներին և միջնակարգ կրթությանը վերաբերող հարցեր: Նախագահին ուղեկցում էին կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, պաշտոնատար այլ անձինք:



ՄԻՇՏ՝ ԿՐԹԱՎՈՐՈՒՄ ԿԱՐԳԱՆՈՒՄ ԵՎ ԿՐԹԱՎՈՐՈՒՄ

ԱՅ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում դեկտեմբերի 18-ին 70-ամյա հոբելյանի առթիվ հյուրընկալել էին նախկին նախարար Սլավա Ասրյանին: Կյանքի շուրջ հինգ տասնամյակը կրթական համակարգին նվիրված, շարքային ուսուցչից մինչև ուղրտի ղեկավարի պաշտոնում աշխատած մանկավարժի հոբելյանը հարազատ օջախում, հարազատ մարդկանց շրջապատում շնորհավորելու նախաձեռնությունը նախարար Նարինե Աղաբալյանին էր, քանզի մարդու նրա տեսակն իրոք պահանջված է Արցախում: Ըստ Ն.Աղաբալյանի՝ այնքան քիչ են մնացել բարձր մտավորականները, որ նրանց պետք է փայտիս, մեծարել: Հակառակ պարագայում արժեհամակարգի կորուստ կարող ենք ունենալ: Ծնարիտ մտավորականին մեծարելը ոչ այնքան կարևոր է նրա համար, որքան՝ սերունդների, քանզի միայն ճիշտ գնահատելով նախորդների կատարածը՝ կարող ենք վստահաբար ասել, որ ճիշտ ենք ապրում:

պաշտոնում, ապա տեղափոխվել և նշանակվել է ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության վարչության պետի պաշտոնում: 1997-ից մինչև 2012-ը՝ նախարարի տեղակալ, իսկ մինչև 2017-ը՝ նախարար: Նրա աշխատանքը գնահատվել է ըստ արժանվույն: 1986թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» ԽՍՀՄ մեդալով, 2009-ին արժանացել է «ԼՂՀ վաստակավոր մանկավարժ» կոչման:

Շուրջ 25 տարի Ս. Ասրյանը պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել նախարարությունում: Թե ինչ է նշանակում հետպատերազմյան տարիներին կրթական համակարգի պատասխանատու լինելը, երբ ավերված էր դպրոցական շենքերի մեծ մասը, իսկ նախադպրոցական համակարգը լրիվ փլուզվել էր, միայն պատկերացնելը բավական չէ: Դա առավել շատ կզգան նրանք, ովքեր կրել են դրա ծանրությունը, երբ բոլոր ջանքերը պետք էր գործադրել, որ դպրոց չփակվի, որ կրթօջախներն ապահովվեն անզամ պարզագույն գույքով ու դասագրքերով: Այսօր՝ երեսուն տարվա հեռավորությունից, երբ մեր գրեթե բոլոր կրթօջախներն ունեն ժամանակի պահանջներին համահունչ պայմաններ, անցյալը մղձավանջային երազ է թվում: Եթե հավելելու լինենք նաև դպրոցին պարտադրված փորձությունները: Ի պատիվ ուղրտի պատասխանատուների կազմակերպչական հմտությունների, թույլ չտրվեց, որ համակարգը ցնցումների ենթարկվի: Չանտեսենք նաև նախարարների հաճախակի փոխվելը: Բայց ամեն նոր նախարարի համար դյուրին էր համակարգը ղեկավարելը, քանի որ, ինչպես խոստովանել են նրանք,

իրենց կողքին ունեցել են Ս.Ասրյանի նման գործիմաց տեղակալ և հավատարիմ ընկեր:

Անդրադառնալով Ս. Ասրյանի կեսդարյա գործունեությանը՝ Ն.Աղաբալյանն ընդգծեց կրթական համակարգին նրա նվիրվածությունը՝ սկսած դպրոցում աշխատանքից մինչև նախարարությունում վարչության պետ,

կավոր և անմնացորդ նվիրում: Դուք Ձեր գիտելքներն ու արհեստավարժությունը ի սպաս եք դրել այն կենսական գործին, որ կոչվում է հայապահպանում: Հիրավի մեծ է Ձեր ներդրումն արցախյան դպրոցի կայացման գործում, և պատահական չէ, որ հայրենիքի ապագայով մտահոգ յուրաքանչյուր ոք Ձեր արած թողածի վերաբերյալ արտահայտվում է մեծազույն ակնածանքով:

Հարգված մանկավարժի և ղեկավարի մասին իրենց սրտի խոսքն ասացին գործընկերները: Բոլորի խոսքում ընդգծվում էին Ս. Ասրյանի գործիմացությունը, հարգալից վերաբերմունքը, լավ խորհրդատու, ամեն հարցում ուսուցիչ լինելը:

Ս. Ասրյանը, որի համար անակնկալ էր այս հանդիպումը, նկատելի հուզված էր ջերմ և սրտաբուխ խոսքերից: Շնորհակալություն հայտնելով նախարարությանը և այն բոլոր կոլեկտիվներին, որտեղ աշխատել է, նա ասաց. «Այս տարիների ընթացքում բազում խնդիրներ են եղել, բայց երբ աշխատում ես կոլեկտիվի հետ, դրանք բավականին հեշտ են հաղթահարվում: Հուսով եմ, տիկին նախարար, այսուհետ ևս Ձեր գլխավորությամբ համակարգը կկարողանա կատարել բոլոր այն աշխատանքները, որոնք պետք է նպաստեն մեր կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների (սրանք իրար հետ առնչվում են, ինձ բախտ է վիճակվել նաև միացյալ նախարարությունում աշխատել) զարգացմանը»:

Նախկին նախարարն ասաց, որ հետևում է գործընկերների աշխատանքին ու կրթական հա-

մակարգի հաջողություններին: Եվ որ իրեն ուրախացնում են առարկայական օլիմպիադաներում մեր դպրոցականների հաջողությունները, մեր մարզիկների և այլ մրցույթներում մեր երեխաների ու երիտասարդների հաղթանակները. «Ես գտնում եմ, որ աշխատանքները, որ կատարվել և շարունակվում են, իզուր չեն անցել, ծառայում են նպատակին»:

Ն. Աղաբալյանը նրան հորդորեց ոչ միայն հեռվից հետևել ուղրտի աշխատանքներին, այլև իր ներկայությունն ապահովել այդ ամենում. «Դուք այդ իրավունքը նվաճել եք, Ձեր շփումը մարդկանց հետ, Ձեր տեսակի գոյությունն ու ներկայությունը մեր մեջ նույնպես ուսուցողական են, և միշտ ուրախ կլինենք տեսնել Ձեզ մեր շարքերում ու մեր ակտիվ ընթացքի մեջ»:

- Չարագցումը և ծնարիտը սա՛ պետք է լինի: Մեր երկուսի օրինակը թող չափանիշ լինի. չպետք է ասել՝ մինչև հիմա ոչինչ չկար, ինձանով է սկսվում ամեն ինչ,- խորհուրդ տվեց Ս. Ասրյանը, որն արդարացիորեն նվաճել է նաև կրթության մասնապետի կոչումը: Նախարարությունը կառավարող մարմին է, իմանական աշխատանքը դպրոցում, տեղերում է կատարվում, մենք պետք է դպրոցների նկատմամբ վերաբերմունքը ինչպես եղել է, շարունակենք, մեր խնդիրն է ապահովել նրանց բնականոն աշխատանքը:

Ինչպես միշտ եղել է համակարգի ծանր իրեամանին, Ս. Ասրյանը հիմա էլ պատրաստ է աջակցել նրան: Եվ այսօր էլ նրա հեռախոսը հասանելի է՝ ղեկավարից մինչև շարքային ուսուցիչ:

70 տարին վերջնագիծ չէ, ինչպես որ ամեն ինչում համեստ մարդը իր համար սահմանում է: Այն ընդամենը կյանքի հերթական կանգառ է՝ ետ մայելու, արարելիքը դեռ տալու համար խոր շունչ քաշելու և նորից առաջ ընթանալու:



վերջին 24 տարում՝ փոխնախարար և նախարար աշխատելը. «Այդ թվերի հետևում շատ մեծ խոսք ու բովանդակություն կա: Դրանում Ձեր մեծ ջանքերն են, հոգսերն ու մտահոգություններն են, իղծերը, ուրախություններն ու հպարտությունը: Այդ բոլոր տարիների գործունեությամբ դուք Ձեր հոգու մի մասնիկն եք ներդրել»: Շնորհավորելով Ն.Աղաբալյանը նախարարության պաշտոնական շնորհակալագիրը հանձնեց հոբելյարին, որում մասնավորապես ասված է. «Դուք Արցախի աշխարհի նվիրյալ զավակներից եք, մասնատվածներից, որոնց վառ տաղանդը բնութագրում է թողած լուսավոր հետազոծը: Ձեր անհատականությունը դրսևորվել է Ձեր գործունեության ողջ ընթացքում: Հետպատերազմյան Արցախում կրթական համակարգը վերականգնելու համար իսկապես մեծ ջանքեր էին հար-

տու, ամեն հարցում ուսուցիչ լինելը:

Ս. Ասրյանը, որի համար անակնկալ էր այս հանդիպումը, նկատելի հուզված էր ջերմ և սրտաբուխ խոսքերից: Շնորհակալություն հայտնելով նախարարությանը և այն բոլոր կոլեկտիվներին, որտեղ աշխատել է, նա ասաց. «Այս տարիների ընթացքում բազում խնդիրներ են եղել, բայց երբ աշխատում ես կոլեկտիվի հետ, դրանք բավականին հեշտ են հաղթահարվում: Հուսով եմ, տիկին նախարար, այսուհետ ևս Ձեր գլխավորությամբ համակարգը կկարողանա կատարել բոլոր այն աշխատանքները, որոնք պետք է նպաստեն մեր կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների (սրանք իրար հետ առնչվում են, ինձ բախտ է վիճակվել նաև միացյալ նախարարությունում աշխատել) զարգացմանը»:

Նախկին նախարարն ասաց, որ հետևում է գործընկերների աշխատանքին ու կրթական հա-

ԶԵՆԱՐԿՈՒՄ

ՎԼՈՐ ՍԵՂԱՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՉ



ԱրՊՅ տնտեսագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպվեց «Կրթությունը՝ տնտեսության զարգացման բաղադրիչ» թեմայով կլոր սեղանը, որին բացի համալսարանականներից մասնակցում էին ԱՅ ԿԿՍՆ և հանրակրթական դպրոցների ներկայացուցիչներ:

խորհրդային մտածելակերպի և նոր արևմտյան կրթական տեխնոլոգիաների ազդեցությունը, ինչը լուրջ մարտահրավերների առաջ է կանգնեցնում նրան, և պետք է կարողանալ ճիշտ ռազմավարություն իրականացնել: «Համաշխարհային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գիտակրթական համակարգը ցանկացած երկրի առանցքային հիմնասյուներից է, և պատահական չէ, որ փոքր պետությունները սահմանափակ ռեսուրսների պայմաններում, խնդիր դնելով արդյունավետ օգտագործել դրանք, շեշտը դնում են ինտելեկտի կրթությանը: Իսկ ինտելեկտի զարգացման հիմնական աղբյուրը կրթությունն է»: Նրա խոսքով՝ ըստ Համաշխարհային բանկի իրականացրած ուսումնասիրությունների, տնտեսական առաջընթացի 78%-ը կախված է կրթական համակարգի զարգացման մակարդակից, մատուցվող կրթական ծառայությունների որակից: Իսկ ի՞նչ տեղ ունի կրթական բաղադրիչը մեր տնտեսությունում, ի՞նչ հարաբերակցության մեջ են կրթության որակն ու տնտեսական առաջընթացը: ԱրՊՅ ուսումնական գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, որ վերջերս մասնակցել է Հայաստանում «Բարձրագույն կրթության» նոր օրենքի շուրջ կազմակերպված քննարկումին, փաստեց, որ բավականին փոփոխություններ են սպասվում այս ոլորտում, որոնք միտված են այն բանին, որ լավագույն շրջանավարտները լրացնեն անհրաժեշտ կարգային բազան:

Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները ԱՅ ազգային վիճակագրական ծառայության հետ համատեղ իրականացրել են ընտրանքային հետազոտություն՝ փորձելով վեր հանել մեր կրթական համակարգին առնչվող հիմնախնդիրները, ներկայացրել են նաև առաջատար երկրների կրթական համակարգերի փորձը, համեմատականորեն անցկացրել, թե այդ երկրների ՀՆԱ-ի ինքնա մասն է հատկացվում կրթությանը, և ինչ արդյունք են ստանում նրանք:

Քննարկված մասնակիցներից յուրաքանչյուրն իր տեսանկյունից ներկայացրեց կրթության որակի վրա ազդող խնդիրները: Մատնանշվեց բուհ ընդունվելու համար դիմորդների կողմից մինչև մեկ տասնյակի հասնող մասնագիտությունների հայտագրումը, որի դեպքում առաջնային է ոչ թե մասնագիտական կողմնորոշումը, այլ ամեն գնով բուհ ընդունվելու ցանկությունը, պետականությունը տեղերի ոչ այնքան նպատակային բաշխվածությունն ու պետական վերով ավարտածներից տնտեսության պահանջարկի բավարարման ուղղությունը գործընթացի ինքնահոս լինելը, կրթական համակարգը պետական պատվերի հիման վրա իրականանալը և մասնավոր հատվածի դուրս մնալը: Մեջտեղ բերվեց նաև չարթնկված փակ շրջան, երբ բուհը դպրոցին է մեղադրում թույլ շրջանավարտներ, իսկ դպրոցը բուհին՝ ոչ որակյալ մասնագետներ տալու համար: Արժարժվեց այն հարցը, թե ինչու պետականությունը ավարտածը տվյալ ոլորտում աշխատանք չի գտնում կամ էլ չի ցանկանում աշխատել, արտերկրում ուսանածները չեն վերադառնում, կամ ինչպես ունի՞ վերադառնալ, երբ այստեղ անելիք չունեն: Չկա մեխանիզմ, թե ինչու են այս կամ այն մասնագիտությանը տվյալ թվով անվճար տեղեր հատկացվում և այլն:

«Մենք այնքան հարուստ երկիր չենք, որ միայն կրթված քաղաքացիներ պատրաստենք, մենք պետք է նաև մասնագետներ պատրաստենք, որ սպասարկեն մեր տնտեսությունը», - որպես ամփոփում՝ ասաց քննարկումը նախաձեռնած տնտեսագիտական ֆակուլտետի դեկանը: Պրոռեկտորի կարծիքով՝ դժվար թե մի քննարկման ընթացքում հնարավոր լինի թեմային վերաբերող բոլոր նրբությունները հասկանալ և միանգամից լուծման ուղիներ մշակել: Խնդրի հրատարակությունը պահանջում է մշտական ուշադրություն, օպտիմալ առաջարկների քննարկում, ընդունելի կարգի մշակում:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Կրթությունը Ֆինլանդիայում
Ֆինլանդիայում մինչև երեխայի երեք տարեկան դառնալը երեխայի ծնողներից մեկին պետությունը վճարում է բավականաչափ նպաստ, որպեսզի նա կարողանա լիարժեք կերպով զբաղվել երեխայի խնամքով: Երեք տարեկանից հետո երեխաներին կարելի է ընդգրկել մասնակրթարանական խմբերում, որտեղ յուրաքանչյուր 12 երեխայի հետ աշխատում են մեկ դաստիարակ և երկու դասուհի: Նախակրթարաններում որևէ գիտելիք չեն սովորեցնում: Երեխաներն աշխարհը խաղալով են ընկալում:

ընկերական, փոխադարձ հարգանքի, սիրո վրա հիմնված փոխհարաբերությունները հանգեցրել են Ֆինլանդիայի կրթական հրաշքին: Սովորողների առաջադիմության միջազգային գնահատման արդյունքներով (PISA-Programme for International Student Assessment) Ֆինլանդիան աշխարհում 12-րդ արդյունքն ունի մաթեմատիկայից, իսկ ընթերցելով հասկանալու կարողությամբ 6-րդն է, բնագիտական առարկաների գծով՝ 5-րդը: Եվ սա այն երկրում, որտեղ առաջին անգամ քննություն են անցկացնում 16 տարեկանում: Կարևոր փաստ է նաև այն, որ ուսումնասիրությունները պարզել են, որ Ֆինլանդիայում ակադեմիապետ անձնատեղ է ամենաթույլ սովորողների արդյունքների տարբերությունը ամենափոքրն է աշխարհում:

դերն ապահովված են: Մի խոսքով՝ ճաշարանի երեխան ստիպված է 2-3 տարեկանից քննություններ հանձնելով պայքարել իր բարեկեցիկ ապագայի համար:

Նիդեռլանդների հաջողության գրավակա-նը անընդհատ վարժանքի վրա հիմնված ուսուցումն է:
Բրունո Ուոթերֆիլդը մաթեմատիկա է դասավանդել արդեն 25 տարի, որից 17-ը՝ Նիդեռլանդներում, իսկ 8-ը՝ Շոտլանդիայում: Նա այն կարծիքին է, որ ուսուցման հույսալից մեթոդը շատ մեծն է ասիական երկրներում (Ճապոնիա, Հարավային Կորեա) կիրառվող մեթոդին, որն է՝ վարժանք, վարժանք, վարժանք: Այնտեղ, որքան հնարավոր է, շատ թեստեր են լուծում, քննություններ հանձնում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջին: Ստեղծականության վրա այնքան էլ ուշադրություն չեն դարձնում: Սովորողները մաթեմատիկայի տնային առաջադրանքներն առցանց են կատարում և միշտ կապի մեջ են իրենց ուսուցիչների հետ: Դասավանդողը չի հանձնարարում վարժություններ և խնդիրների պարտադիր որոշակի քանակ: Սովորողները գրում են, որքան էլ ուզում են: Քննությունների ընթացքում էլ նրանք չեն նյարդայանում, քանի որ իրենց ամենօրյա սովորական գործունեությանը են զբաղված:

Ամբողջ աշխարհի կրթական ասպարեզի փորձագետները փորձում են պարզել, թե հնարավոր է Ֆինլանդիայի փորձը կիրառել իրենց երկրներում: Մասնավորապես փորձագետ Ուելչն այն կարծիքին է, որ ամեն ինչ հնարավոր չի լինի ընդօրինակել Ֆինլանդիայի, քանի որ նրանց երկրում ընդամենը 5,5 մլն մարդ է ապրում, որոնք գրեթե բոլորն էլ նույն մշակույթի կրողներն են: Բոլորովին այլ պատկեր է Մեծ Բրիտանիայում, ուր ներգաղթյալների շնորհիվ մշակույթների բազմազանություն է: Նույն պատկերն է նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և Եվրոպական մի շարք այլ երկրներում: Փորձագետ Ուելչն այն կարծիքին է, որ Ֆինլանդիայի մեծ պետք է ազատվել ընդհանրացված հարցաշարային նյարդայանացող համախափ քննություններից:

Իռլանդիայի հոգևոր հովիվի հոգածությունը բարձր է պահում կրթական մակարդակը:
Աշխարհին Օսկար Ուայլդ և Ջեյմս Ջոյս տված երկրի քաղաքացիները հպարտ են նաև նրանով, որ իրենց երկիրը գրագիտության մակարդակով 10-րդ տեղն է զբաղեցնում աշխարհում, իսկ Եվրոպայում 2-րդն է Ֆինլանդիայից հետո: Այս երկրում Ֆինլանդիայի մեծ տարրական դպրոցի վերջում պաշտոնական քննություններ չկան, և միայն 15 տարեկանում են սովորողները հանձնում իրենց առաջին գրավոր քննությունները (որոշ առարկաներից էլ բանավոր հարցերի են պատասխանում կամ էլ նախաձեռն անում) և ստանում են իրենց հիմնական կրթությունը հաստատող վկայականը:

Լեհաստանի կոմունիստական անցյալը սովորողներին գիտելիքների ծարավի զգացողություն է տալիս:

Մեթյու Դեյլը գրում է, որ Լեհաստանի դպրոցներն արտաքինից շատ անշուք են, քանի որ դպրոցական գրեթե բոլոր շենքերը կառուցվել են կոմունիստական ժամանակաշրջանում, բայց այդ անշուք շենքերի ներսում աշխարհի ամենաառաջավոր կրթական համակարգերից մեկն է գործում: Թե որքան է Լեհաստանը հոգում իր երեխաների կրթության մասին, խոսում է այն փաստը, որ այս երկիր կրթության նախարարությունը ստեղծվել է 1773թ., որն ամենահինն է աշխարհում:

2012-2013 ուսումնական տարվանից սկսած Լեհաստանում երեխաները սկսում են տարրական դպրոց հաճախել 6 տարեկանից՝ նախկին 7-ի փոխարեն: Տարրական դպրոց երկու փուլով է, որոնցից յուրաքանչյուրը տևում է 3 տարի: Առաջին փուլում առարկաներն ինտեգրված են, և մի ուսուցիչ է աշխատում երեխաների հետ, ինչպես մեզ մոտ: Երկրորդ փուլում ուսուցումն արդեն առարկայական է, և տարբեր ուսուցիչներ են մտնում դասարան: 6-րդ դասարանիցից տարրական դպրոցն ավարտում են պարտադիր գրավոր քննություններով, որոնց հարցաշարերը համապատասխանում են միջազգային չափորոշիչներին: Քննությունները հաջողությամբ հանձնած սովորողները տարրական դպրոցի

ավարտական վկայականներ են ստանում: Միջին դպրոցում ուսումնառությունը տևում է 3 տարի և ավարտվում է երեք քննություններով՝ հումանիտար, բնագիտություն և օտար լեզուներ:

Սինգապուրում ավելի մեծ ուշադրության են արժանացնում ուսումնատեղի սովորողներին, քան միայն օժտվածներին:

Սինգապուրի կրթական համակարգը բարձր է գնահատվում աշխարհում շնորհիվ Սովորողների առաջադիմության միջազգային գնահատման ծրագրի բարձր արդյունքների, բայց ի տարբերություն Ֆինլանդիայի, որտեղ մինչև 16 տարեկան դառնալը սովորողը ոչ մի քննություն չի հանձնում, և սովորողներին էլ չեն առանձնացնում ըստ ընդունակությունների, Սինգապուրում կրթական ամբողջ համակարգը կազմակերպվում է տարբեր քննությունների միջոցով սովորողներին ըստ ընդունակությունների և կրթական գործընթացը, ուսումնական պարամետրները միանման ակադեմիական ընդունակություններով ու կարողություններով կազմված դասարաններով կազմակերպվում: Այս ձևով նրանք բոլոր սովորողներին հավասար հնարավորություն են տալիս իրենց գիտելիքների ու կարողությունների զարգացման համար: Հատկանշական է, որ Սինգապուրի տնտեսության հիմքում նույնպես գործում է իրենց կրթական համակարգի սկզբունքը՝ յուրաքանչյուրին աշխատանք, պաշտոն է տրվում միայն ըստ ընդունակության և կարողությունների: Այս առումով բոլորն էլ գիտեն, որ արդարություն է իշխում, և բոլորին էլ տրված են հավասար հնարավորություններ: Հենց իրենց կրթական համակարգի և տնտեսության կազմակերպման այս սկզբունքն է Սինգապուրյան տնտեսական հրաշքի գաղտնիքը:

Սինգապուրի կրթական համակարգը ներսից ավելի լավ ուսումնասիրելու համար էնդոյու Լինգֆորդը՝ մանկավարժ Սան Ֆրանցիսկոյից, 15 ամիս աշխատել է այդ երկրի դպրոցներից մեկում՝ դասավանդելով անգլերեն և մաթեմատիկա: Նա գրում է, որ Սինգապուրում իրականացվում է դպրոցական քննությունների մի շատ խիտ համակարգ, որը սկսում է գործել սովորողների վաղ տարիքում: Նույնիսկ 3-րդ դասարանում քննությունների միջոցով առանձնացնում են երեխաներին ըստ ընդունակությունների, որպեսզի հետագա ուսուցման մեջ ոչ ոք չտուժի: 6-րդ դասարանի վերջում սովորողները որակավորման քննություններ են հանձնում, որոնց արդյունքներով որոշում է կայացվում, թե տվյալ սովորողն ինչպիսի միջին դպրոցում է շարունակելու իր ուսումը: Այս որոշումը միջին դպրոցում սովորելու տարիներից հնարավոր է փոխել, որը շատ հազվադեպ է լինում: 10-րդ դասարանի վերջին սովորողները նորից քննություն են հանձնում, որի բավանդակությունը կախված է այն բանից, թե ինչպիսի միջին դպրոցի հետ գործ ունեն: Այս քննությանը վերջնականապես որոշվում է, թե սովորողը կարող է իր ուսումը շարունակել համալսարանում, թե՛ պետք է բավարարվի միջին մասնագիտական կրթություն ձեռք բերելով:

**Պարտապետ
Ռախա ՍՈՂՈՒՆՅԱՆԸ
ԱրՊՅ տնտեսագիտության
ֆակուլտետի 4-րդ կուրսի
ուսանողուհի**

Նշված բոլոր հիմնավոր պատճառներն ու

ԸՆԴՕՐԻՆԱԿՄԱՆ ԴԱՍ ՍՈՒՐԲ ԱՆՍԵՆՈՒԹՅՈՒՆ

Կրթությունն ազատության ավելի լավ պահպան է, քան մեծաքանակ բանակը:

Էվերեստ

Ոչ ոք չի կարող վիճարկել, թե որքան ծանր է ուսուցչի գործունեությունը գիտատեխնիկական առաջընթացի այս հորդափուն պայմաններում: Բայց և այնպես, միայն ուսուցիչը կարող է հեղափոխություն մտցնել կրթության ու դաստիարակության ոլորտում: Հին, ավանդական մեթոդները վաղուց սպառել են իրենց և կորցրել հետաքրքրությունը: Այսօր դրանցով հնարավոր չէ գրավել երեխային: Ուրեմն հենց ուսուցչի ձեռքին է այն գործը դրվում, որով դասապրոցեստում կարող է նոր խոսք ասել, գրավել սովորողների ուշադրությունը՝ չմոռանալով, սակայն, իր գերագույն առաքելության մասին: Միայն հնարամիտ ուսուցիչները կգտնեն այն ճշմարիտ ուղին, որով ուսուցումը և ուսումը կդարձնեն ցանկալի ու հաճելի երեխայի համար: Նրանցից է կախված, թե աշակերտն ինչքանով է վստահ իր ուժերին, ինչքան է կարողանում յուրացնել գիտության անհատական ծովից իր բաժինը:



Ժամանակակից պայմաններում դյուրին չէ ուսուցիչների աշխատանքը, մասնավորապես նրանցը, ովքեր ամեն կերպ ձգտում են բարձր պահել ուսուցչի վեհ անունը՝ անկախ այն հանգամանքից, թե պետությունը ինչքանով է վարձատրվում իրենց: Նրանց պատվով հարթակին կանգնեցնելու համար պետությունը նախ նյութապես պետք է պահովի նրանց, այնուհետև դնի իր պահանջները: Իհարկե, երբեք լավ ուսուցիչ չի առաջնորդվել այդ չափանիշներով, քանի որ ման ուսուցիչն է վերուստ գիտել իր սուրբ առաքելությունը, որն իրականացնում է բարեխղճորեն՝ չակնկալելով որևէ մեկի օժանդակությունը կամ գնահատականը:

Վերջերս Ասկերանի շրջանի համապատի միջնակարգ դպրոցում փնջի շրջանակներում կազմակերպված ընթացակարգում դասերը հաստատեցին այն պարզ ճշմարտությունը, որ ուսուցիչ լինելը, իրոք, վեհ կոչում է:

Առաջին դասը կազմակերպվեց ռուսաց լեզվի ուսուցչուհի Մեդիան Մեծլույսյանի մոտ, որ հայտնի է իր շնորհալիությամբ ու ստեղծագործական ունակություններով (4-րդ դասարան, թեման՝ «Կռվարարներ»): Դասը կարելի էր համեմատել ճարտարապետական կոթողի հետ, որն աչքի է ընկնում իր նուրբ ու ճաշակով լուծումներով, դաստիարակչական խոր գաղափարներով ու գիտական խորաթափանց մանրամասներով: Այն սկսվեց երեխաների՝ միմյանց հանդեպ դրսևորած հարգանքի ժեստով ու առ ուսուցիչ տածած հասուկ վերաբերմունքով: Այնուհետև՝ տեսաֆիլմ, որն ընդգրկում էր կյանքի իրարեք բնագավառները: Կենդանիների, թռչունների աշխարհում՝ անհաշտություն, դպրոցական կյանքում՝ երեխաների վեճ ու կռիվ, հարևանների միջև՝ անբարյացակամություն, խորհրդարաններում՝ պատգամավորների քաջաշնորհք և այլն: Այս ամենը երեխաները մանկան պարզ ու անկեղծ անմիջականությամբ գնահատեցին ու հանգեցին մեկ ընդհանուր եզ-

րակացության. նրանք կռվարարներ են, ինչը ռուսերենով հնչում է драучи բառով: Դասին կազմակերպված բառային աշխատանքը, գեղեցիկ, ոչ հայկական առոգանությամբ սովորողների ռուսերեն ընթերցանությունը, դերերով պատմություններ կայացումը, տեսողական հիշողությունը զարգացնող փոքրիկ թելադրությունը (տեղանկյունները ներկել հարցի ճիշտ պատասխանին համապատասխանող գույներով), գրատախտակի մոտ տրված հանձնարարությունները (առաջին աշակերտ. տրված է ձագի անունը, գտնել իր ու մոր ռուսերեն տարբերակները, երկրորդ աշակերտ. տրված է կենդանու անունը, գտնել ձագի անունը), քերականական առաջադրանքները, միտքը զարգացնող խաղերը, ֆիզկուլտուրայի միտված էին մի գերագույն նպատակի՝ սովորողների ռուսերեն խոսքի հղկում ու զարգացում, մտա-

կորհրդի ընդլայնում, մարդկային լավ հարաբերությունների կառուցում, ինչը գերազանց էին կատարում երեխաները: Ոչ մի աշակերտ դուրս չմնաց ուսուցչուհու տեսադաշտից: Իսկ երբ ցուցադրվեց ուսուցչուհու կողմից գաղտնի արված տեսաֆիլմը, որտեղ երեխաները դասամիջոցներին կռվում ու վիճում էին իրար հետ, կողքից ավելի լավ գնահատեցին իրենց դրսևորած վարքը և խոստացան, որ այսուհետ մնան կերպ չեն վարվի:

Դասի ավարտին ուսուցչուհին անակնկալ էր պատրաստել. գտնել թաքնված նախադասությունը՝ «Мы сегодня молодые», ինչը արագ որոշեցին երեխաները ու արտահայտեցին իրենց կարծիքը դասի և ուսուցչուհու մասին (շատ հաճելի էր լսել նրանց խոսքը): Ու հետևում է դասի առաջնահերթ գաղափարը՝ «Երեխաներ, եկեք ապրենք հաշտ ու համերաշխ»:

Թե ուսուցչուհու, թե սովորողների խոսքը հաստատվում էր մայրենի իմացությամբ, այսինքն՝ ուսուցչուհին նախապատվությունը տալիս էր ազգային լեզվի տարբերակին, ինչը ամուր հենք է այլ լեզուների տիրապետման գործընթացին: Դասի բոլոր մանրամասներով ստացվեց մի հրաշալի մանրակերտ, որի բոլոր բաղադրիչները ունեին իրենց հստակ ու անխախտ տեղը: Նուրբ ու ճաշակով լուծումներով, դաստիարակչական խոր գաղափարներով, գիտական խորաթափանց մանրամասներով կազ-

մակերպված դասն արժանի էր խոր գնահատանքի, ինչն էլ նկատեցին ու հաստատեցին ներկաները: Վերլուծության ժամանակ դրվատանքի խոսք հնչեցրին Մեդիան Մեծլույսյանի հասցեին. հստակ խոսք, ուսուցչուհու պահվածք, մանկավարժական տակտ, կրտսեր տարիքի երեխաների ցուցաբերած գիտելիքներ, հուժեղորով շաղկապված հաշտ ու համերաշխ գործընթաց, հետաքրքիր ու գեղեցիկ սկիզբ, ավարտ և այլն: Ուսուցչուհու խոստովանությամբ այս գլխապտույտ դարաշրջանում գոյություն ունեցող անհաշտության պայմաններում իրեն միշտ հաջողվում է այդ դասարանում լավ արդյունքներ գրանցել ու հասնել նպատակին:

Հաջորդ դասը կազմակերպվեց դպրոցի երիտասարդ ուսուցչուհի, անգլերենի մասնագետ Լիլյա Ծատուրյանի մոտ՝ հինգերորդ դասարանում: Այստեղ ևս թեման շատ հոգեհարազատ էր երեխաներին՝ «Բարի գալուստ հեքիաթների աշխարհ» ժպիտը, ուրախ տրամադրությունը, աշխուժությունը իշխում էին ողջ դասապրոցեստում: Ուսուցչուհին հնտորեն կարողանում էր ուսուցումն ու դաստիարակությունը միասնել բոլոր առաջադրանքների կատարման ընթացքում: Այդ ամենը ներկայացվում էր խաղերի միջոցով, որոնք ավելի էին հետաքրքիր դարձնում նյութը: Ներկայացվեց «Գորտ արքայազնը» հեքիաթը. երեխաներին բաժանվեցին անակնկալներ, որոնցով պետք է նկարագրեին արքայազնին ու թագուհուն: Դասարանում մտած երեխաները նրանց նկարագրում էին համապատասխան անակնկալներով, իսկ կանգնածները թարգմանում էին դրանք: Այնուհետև՝ խաղ գնդակով, որի վրա գրված էին տարբեր բնագավառներ.

ուսումնական առարկաներ, կենդանիներ, մրգեր, տրանսպորտի միջոցներ... որոնք աշակերտները կարողանում էին վիճակահանությամբ թվարկել: Իսկ նախորդ համեմարված ծիծաղաշարք պատմությունները նրանց կողմից ներկայացնելիս ուսուցչուհին ժպտադեմ հետևում էր նրան՝ ոգևորելով ու դպական էմոցիաներ ստեղծելով դասապրոցեստում: Թե՛ նախորդ և թե՛ նոր թեմայի («Եղանակավորող բայեր-մոդալ բայեր») բացատրության ժամանակ ուսուցչուհին պարտադիր դիմում էր հայերենին՝ ավելի ևս ամրակայելով սովորողների գիտելիքները: Նրանք հասկացան, որ կարելի է հաղթահարել կյանքի բոլոր դժվարությունները: Ամեն դժվարություն, ամեն խոչընդոտ ունի լուծման իր եղանակը, միայն պետք է կամք դրսևորել ու փնտրել այն: Սովորելու բան ամեն օր կա, պարզապես պետք է կամենալ:

Դասի եզրան կողմը սովորողների բանավոր խոսքի զարգացումն էր, ինչը ժպիտներով նվաճեց Լիլյա Ծատուրյանը: Այսպես երկու երիտասարդ ուսուցչուհիները օտար լեզու էին դասավանդում՝ պահպանելով մեր ազգային դիմագիծը:

Երրորդ դասը կազմակերպվեց ինֆորմատիկայի ուսուցչուհի Վիկա Գասպարյանի մոտ, որն իր առջև երեք նպատակ էր դրել. 1. ուսուցողական (ճանաչել ինֆորմացիայի աղբյուրների տեսակները, կողք, կողակողումը, ինֆորմացիայի կրիչները, ձեռք բերած գիտելիքները կի-

րառել գործնականում, ինֆորմացիան կողակողումը և վերծանել, զարգացնել տեղեկատվության մշակման հմտությունն ու տեսողական հիշողությունը): 2. ճանաչողական (ինֆորմացիայի դերը մարդկության պատմության մեջ): 3. դաստիարակչական (համատեղ աշխատելու կարողություն ձեռք բերել, սեփական ուժերի համղեցվածություն ներշնչել): Նա կարևորեց աշխարհագրության, ֆիզիկայի, մաթեմատիկայի, հայոց լեզվի և պատմության իմացությունը սովորողների կողմից թեման յուրացնելու գործում: Դասի ընթացքում իրականացրած աշխատանքը՝ հյուրերին նախապես ուղարկված յուրօրինակ հրավիրատոմսն ու նրա վերծանումը, գերհագեցած ինֆորմացիոն դարի մասին գրույցը, «Գուշակիր մեղեդին» խաղի միջոցով ծայրային ինֆորմացիայի ապակողակողումը, «Կող, կողակողում և ապակողակողում» թեմայի ամփոփումը, հայոց տառերի թվային համարաձեքների արդյունավոր կողակողված ինֆորմացիայով ժամացույցների ինֆորմացիայի վերծանումը սովորողների կողմից, ժեստերի լեզուն՝ որպես ինֆորմացիայի կողակողում («Ինչպես են երգում խուլիկանները»), լուսակրի ազդանշաններով շարժվելու կանոնները որպես ինֆորմացիայի կողակողում ներկայացնելը, սպասարկման վայրերում հաճախակի հանդիպող նշանների վերծանումը, ինքնուրույն աշխատանքը, այլազգված ամփոփիչ նախադասության վերծանումը այնքան հետաքրքիր էին, որ ներկաները չզգացին, թե ինչպես սահեց ժամանակը:

Քննարկման ընթացքում հնչող խրախուսական խոսքերից հետո դպրոցի տնօրեն Լյուդմիրա Մոսիսյանը ևս հաստատեց, որ շատ անգամներ էլ ինքը դասախոսներ է կատարում նրանց մոտ մի նոր բան սովորելու ակնկալիքով, իսկ փոխտնօրեն Գայանե Աղաբաբյանը արտահայտեց իր հպարտությունը ուսուցիչների հասցեին արված դրվատանքի խոսքերի համար: Նա շատ ուրախ է, որ իր և այլոց կարծիքները համընկնում են:

Ասկերանի շրջանի վարչակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը իր գոհունակությունը հայտնեց գործընկերների ուսուցիչների հասցեին արված կարծիքների համար՝ ընդգծելով, որ շատ կարևոր է, թե ուսուցիչն ինչպես է նախապատրաստվում դասին, ինչքանով է օտված մարդկային արժանիքներով:

Վերջում դպրոցի դասավոր ժենյա Արզումանյանի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումը՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 150-ամյակին, լրացրեց օրվա տրամադրությունը: Հաճելի էր 4-րդ դասարանիցների շուրջերից լսել հայոց երգի Մեսրոպ Մաշտոց հռչակված Կոմիտասի մեղեդիներն ու նրանց գիտելիքները համեմարել երգահանի կյանքի ու գործունեության մասին:

Դպրոցական կյանքի ևս մի օր ամբողջությամբ ծառայեց մեր ազգային գաղափարախոսությանը:

Սուրբայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՆՏԵՐՎԿՏԻՎ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԵՍՆՈՒՈՒԳԻԱՅԻ ԺԱՄԻՆ

Յուրաքանչյուր հաջողված փորձարարական դաս ունի իր հետաքրքիր կողմը, առանձնահատկությունը, ինչպես նաև գրավչությունը: Եվ յուրաքանչյուր առարկա սաների առջև բացում է իր գաղտնիքները, իր գործունեության ոլորտները:

Գործնական առարկաների շարքում իր կարևորությունն ունի «Տեխնոլոգիա» առարկան, որի անհրաժեշտությունն ու լայն կիրառությունն զգացվում է թե՛ կենցաղում, թե՛ սպեցիֆիկ գործունեության ոլորտում:

Հերթական անգամ ակնատեսը եղանք Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի տեխնոլոգիայի ուսուցչուհի Էլեն Մուրադյանի հաջատրյանի նախաձեռնությամբ: Մեկ անգամ չէ, որ տարիների փորձով հարստացած 60-ամյա ուսուցչուհին իր ավանդը է բերում՝ երեխաներին հմտացնելով կիրառական գործնական ոլորտում: Ուսուցչուհին տարիների ընթացքում իր սաների հետ մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, նրանց հետ միասին կազմակերպել հետաքրքիր միջոցառումներ, ցուցադրել գովեստի արժանի լավագույն աշխատանքներ:

Նոյեմբերի 23-ին կայացավ ուսուցչուհու բաց դասը 5-րդ «ա» դասարանում տղաների խմբի «Տեխնոլոգիա» առարկայից: Աշակերտները սիրով նախապատրաստվել էին դասաընթացին՝ «Դեռալների շաղափումը» թեմային՝ միաժամանակ ցուցաբերելով այս ժամանակաշրջանի

բուն ձեռք բերածի ակտիվություն:

Նոր դասի թեման՝ «Դեռալների վերջնամշակումը և հավաքումը», ուսուցչուհուն մղել էր որոնողական աշխատանքների: Դասն ինտերակտիվ էր, համակցված՝ ապահովված տեսական անհրաժեշտ գիտելիքներով ու դիտողական բոլոր պարագաներով: Ուսուցչուհին ցուցադրում էր անհրաժեշտ գործիքները, հող նախապատրաստում նոր նյութի գործնական կիրառության համար:

Դասի ընթացքում սաներն իմացան, որ փայտե դեռալների միացման համար ամենից գործածական են երեք տեսակները՝ միացում մեխերով, պտուտակներով և տսնծով: Դեռալներն էլ լինում են երկու տեսակի՝ հիմնական (հաստ) և կազմող (բարակ):

Ուսուցչուհին աշակերտների միջոցով ամրապնդեց մեխերի տեսակներն ու կիրառությունը, որոնք իրարից տարբերվում են ըստ գլխիկի, երկարության և տրամագծի:

Գործնական աշխատանքի անցնելուց առաջ ուսուցչուհին սովորեցրեց մուրճի գործածման ճիշտ ձևը, որ չվնասի ձեռքը, և փայտն ամուր նստի: Յուրաքանչյուր մեթոդի բացատրության ժամանակ ուսուցչուհին ցուցադրում էր դեռալների միացման միջոցները՝ միաժամանակ գործածելով գրատախտակին ամրացված գծապատկերների վահանակը: Սոսնձաման մեթոդը բացատրելիս նա թվարկեց բնական և արհեստա-

կան սոսնձների տեսակները՝ մատնանշելով պատասառի վրա:

Ուսուցչուհին ճիշտ գործածեց ժամանակը՝ կատարելով ժամանակակից դասին ներկայացվող բոլոր պահանջներն ըստ խթանման և իմաստավորման, իսկ կշռադատման փուլն



անցկացրեց թեստային աշխատանքի միջոցով: Դասը հագեցած էր տերմինների առատությամբ, որոնք հստակ պատկերացում են տալիս առարկայի գործնական նշանակության մասին, ինչպիսիք են շաղափը, տավրիչները, սղոցները, խարտոցները, հղկանյութերն իրենց տեսակ-

ներով: Ստեղծվեցին բազմաթիվ միջառարկական կապեր պատմության, գրականության, մաթեմատիկայի միջև: Դասը համեմվեց համեմունքներով, լեզունքներով, պատմական նյութերով, թե երբ և որտեղ են սկսել գործածել այս կամ այն պարագաներն ու գործիքները:

Գործնական աշխատանքի փուլում պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները, աշակերտներն սկսեցին տեսական նյութը վերածել գործնական աշխատանքի՝ իրար միացնել հիմնական և կազմող դեռալները դասին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Վերջնարդյունքը գոհացուցիչ էր: Խմբային աշխատանքի արդյունքում երկու թիմերը հաջողությամբ դեռալները առաջադրված ձևերով միացրին իրար:

Դասը հարուստ էր տեղեկություններով, անցավ ուսուցչուհու կողմից տարիների ընթացքում համարված և հարստացած արդիական դասարան-արհեստանոցում, որտեղ առկա են ժամանակակից դասին անհրաժեշտ բոլոր պայմանները՝ դազգահներ, գործիքներ, նյութեր:

Սաները հմտանում են և խորացնում կենցաղում կիրառելի իրենց ունակությունները, իսկ ուսուցչուհին գոհ է արդյունքից:

Կարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

1989Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԸ

Իմ օրագրից

1.12.1989թ.: Մեզ մոտ իրավիճակը կրկին սրվեց: Մարդկանց հավատը կենտրոնի նկատմամբ նվազագույնին հասել, որոշների մոտ հիասթափություն է նկատվում: Դպրոցում թե դասերի ժամանակ, թե դասամիջոցներին բոլորը խոսում են նույնների 28-ի որոշման մասին: Երկար դասամիջոցին կոլեկտիվին իրագրել դարձրի արհմիությունների մարզային ակտիվի ժողովի կողմից ընդունված դիմումի բովանդակությանը, ծանոթացրի մա «Հաղթանակ» հրապարակում տեղի ունեցած բազմաձևագրանոց միտինգի մասնակիցների կողմից ընդունված որոշմանը, որը հրապարակված է «խորհրդային Ղարաբաղ» նյութների 30-ի համարում: Որոշման մեջ գրված է, որ խՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի 1989թ. նոյեմբերի 28-ի «ԼՂԻՄ-ի իրադարձությունների նորմալացման միջոցառումների մասին» որոշումն առաջացրել է մարզի աշխատավորների խորը գայրույթը և վերջնականապես համոզել իշխանության կենտրոնական մարմինների հանդեպ անվստահության հիմնավորվածության մեջ: Նստաշրջանի նոր որոշումն ըստ էության հանդիսանում է Կենտրոնի լրիվ անձնատուր լինելը Ադրբեջանի ազգայնամուլ, ծայրահեղական ուժերի առջև, որոնք իշխանության վրա ուժային ճնշման անօրեն մեթոդներ են կիրառում՝ նպատակ ունենալով խափանել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծումը, որն է՝ Արցախի ժողովրդի ինքնորոշումը: Այդ որոշումը, ինչպես նաև 1989թ. հոկտեմբերի 20-ին խՍՀՄ ԳԽ նախագահության կողմից ընդունված որոշումը, որ մարզը թողեց Ադր.ԽՍՀ կազմում, խստորեն ընդունվել է առանց խՍՀՄ ժողովրդատանների առաջին համագումարի կողմից ստեղծված Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Գ.Ս. Տարազևիչի նախագահությանը հանձնաժողովի անդամների մասնակցությամբ, առանց հաշվի առնելու այդ հանձնաժողովի դրական կարծիքը մարզը Ադրբեջանի կազմից հանելու հարցում: Ցավալի է, որ այդ տխրահեղակ որոշմամբ դադարեցվում է ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի (ՀԿԿ) գործունեությունը, և մարզում իշխանությունը տրվում հանրապետական կազմակերպչական կոմիտեին, միաժամանակ ստեղծվում է մի նոր հանձնաժողով՝ կազմկոմիտեի գործունեությունը վերահսկելու և մարզխորհրդի ընտրությունների անցկացման գործընթացը կազմակերպելու: Նոր հանձնաժողովը կոչվում է խՍՀՄ ԳԽ-ին ենթակա վերահսկիչ դիտորդական հանձնաժողով: «Հաղթանակ» հրապարակի հանրահավաքը դեմ էր մա մարզխորհրդի և նրա գործկոմի գործունեության վերականգնող Ադր.ԽՍՀ կազմում: Ոչ ոք չի ուզում լսել «Ադր.ԽՍՀ» բառը. դա ավելի էր բորբոքում մարդկանց ջղերը, և վիճակն ավելի է շիկանում: Հրապարակում տեղեկացա մա, որ Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամները մեկնում են Երևան մեր հարցը միասին լուծելու նպատակով:

2.12.1989թ.: Երևանից ստացանք բարի լուր: Այն է՝ նոյեմբերի 30-ին Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի մասնակցությամբ հրավիրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան, որը 1989թ. դեկտեմբերի 1-ի երեկոյան ընդունեց «Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին համատեղ որոշում»: Լսելով այս որոշման լուրը՝ որոշ չափով հանգստացանք և ուրախացանք, իրար շնորհավորեցինք: Վերջապես ինքներս ենք լուծել մեր հարցը: Այս որոշումն ինձ համար և՛ ուրախալի էր, և՛ մտորումների տեղիք տվող: Հայոց պատմությանը քաջատեղյակ են: Չէ՞ որ 1919թ. մայիսի 28-ին էլ՝ մեր Անկախության հռչակման տարեդարձի օրը, մեր հայրերը ուրախ ցնծությամբ ընդունեցին Ալեքսանդր Խատիսյանի շուրթերից դուրս եկած և Արևմտյան Հայաստանի միացման՝ Ազատ և Միացյալ Հայաստանի հռչակման մասին լուրը: Սակայն...

3.12.1989թ.: Շրջափակումը շարունակվում է, բայց այդ վիճակը մոռացած՝ պահանջում ենք 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման բեկանում:

4.12.1989թ.: Մենք դեռ վրդովմունքի մեջ ենք այդ չարաբաստիկ որոշման կապակցությամբ, չնայած և ուրախ ենք Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի դեկտեմբերի 1-ի համատեղ որոշման համար, բայց ավելի գրգռվեցինք, երբ իմացանք, որ այդ օրը Քաբվում և Ադրբեջանի բոլոր շրջաններում տոնական միտինգներ ու ցույցեր են կազմակերպվում, իրար շնորհավորում են նույնների 28-ի խՍՀՄ ԳԽ որոշման առթիվ, միևնույն ժամանակ տոնում Ադրբեջանի Ազգային ճակատի ծննդյան առաջին տարեդարձը: Այդ միտինգներում և ցույցերում գոռում-գոչումով պահանջում են Լեռնային Ղարաբաղից արտաքսել հայերին, ոտնատակ անել, ոչնչացնել և այնտեղ բնակեցնել ադրբեջանցիներին: Այդ օրերին Մոսկվայի հասցեով բազմաթիվ նամակներ, դիմումներ, բողոքներ ու խնդրագրեր են ուղարկվում:

7.12.1989թ.: Հայոց մեծ աղետի օրն է: Մեկ տարի առաջ այդ օրը առավոտյան ժամը 11-անց 41 րոպեին Մեծ աղետ ապրեց Մայր Հայաստանը: Այսօր ամենուրեք խոնարհվել են ազգային դրոշմերը: Քաղաքի փողոցները լցված են մարդկանցով: Դեպի Մեծ Հայրենական զոհվածների հուշահամալիր են քայլում բոլորը: Ուղիղ ժամը 10-ին սկսվել է սգո երթը: Երկրաշարժի հուշարձանի մոտ պատվո պահակ են կանգնել հ. 10 միջնակարգ դպրոցի 10-րդ «բ» դասարանի ռազմահայրենասիրական աշխատանքի դաստիարակությամբ կոմունայի կոմունարները: Հուշարձանին ծաղիկներ են խոնարհում Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի, Հատուկ կառավարման կոմիտեի, կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի և քաղխորհրդի անդամները: Մեկը մյուսի հետևից հուշարձանին են մոտենում արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները, դպրոցականներն ու նրանց ուսուցիչները: Ինչպիսի՜ կարգապահություն...

8.12.1989թ.: Մեզ տեղեկացնում են, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը նամակով դիմել է Մ.Ս. Գորբաչովին՝ հայտնելով, որ Լեռնային Ղարաբաղի հարցը կհանգի իր արդարացի լուծմանը: Ցավոք սրտի, անցնում են օրեր, սակայն խուլ լռություն է, Գորբաչովի ծայրը չի լսվում, պատասխան չկա, իսկ Ադրբեջան էլ անցնում է ավելի մեծամասշտաբ հակաղարաբայան, հակահայկական և հակախորհրդային գործողությունների:

9.12.1989թ.: Մոսկվայում կայացավ խՍՀՄ ԿԿ-ի հերթական պլենումը:

10.12.1989թ.: Երեկոյան չար լուր տարածվեց: Անհայտ անձանց կողմից պայթեցվել է Կրկնաթաղի թաղամասից Կարկառ գետի ձորն իջնող ջրատարը, որի հետևանքով քաղաքի մի շարք թաղամասերի բնակիչներ մնացին առանց ջրի: Չգիտես ինչու, «անհայտ անձինք» են կոչվում. այդ նույն «անհայտ անձանց» կողմից չէ՞ր աղբով ու մամբով թունավորվել Ղայբալուից եկող ջուրը:

12.12.1989թ.: «խորհրդային Ղարաբաղ» թերթում հրատարակված է Հայկական ԽՍՀ-ից ընտրված խՍՀՄ ժողովրդական ղեկավարների հայտարարությունը: Մեջբերում են. «Ինչպես հայտնի է, խՍՀՄ ժողովրդական ղեկավարների առաջին համագումարը խՍՀՄ ԳԽ Ազգային խորհրդի խորհրդի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովին հանձնարարել էր քննության առնել ԼՂԻՄ-ում տիրող վիճակը և արդյունքների մասին գեղուցել խՍՀՄ Գերագույն խորհրդին: Սակայն խՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերյան նիստում հանձնաժողովի եզրակացության փոխարեն խՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության անունից ներկայացվեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացման միջոցառումների մասին» որոշման նախագիծը: Այդ նախագիծը նախագահությունում չէր քննարկվել: Ավելին, Գերագույն խորհրդի անդամներին դրան նախապես չէին ծանոթացրել: Դեպուտատների համար այն ընթերցվեց միայն քննարկման օրը: Չլսվեց մա հանձնաժողովի կարծիքը: Լիովին անտեսվեց մա Հայկական ԽՍՀ-ից և ԼՂԻՄ-

ից ընտրված խՍՀՄ ժողովուրդատների այն առաջարկը, որ հարցի քննարկումը հետաձգվի այն բազմակողմանիորեն նախապատրաստելու հետագա քննարկման համար: Ուստի Հայկական ԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից ընտրված խՍՀՄ ժողովրդական ղեկավարները ստիպված եղան հեռավալ նիստերի դադարեցնելը: «Մենք խՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշումը գնահատում ենք որպես Կենտրոնի կապիտուլացում Ադրբեջանի ժողովրդական ճակատի ծայրահեղականների առջև»: (Հայտարարության լրիվ տեքստը կցված է օրագրին):

13.12.1989թ.: Հրապարակի վրա է խՍՀՄ Կենտկոմի դիմումը խորհրդային ժողովուրդներին: Ընթերցում են, տեսնում, որ նույն երգն է հնչում իր անորոշ դրույթներով: Այսպես օրինակ. «...խորհրդային մարդիկ ամենուր իրենց պետք է գզան վստահ ու ապահով՝ տանը, փողոցում, աշխատավայրում»: Մտածում են՝ Մոսկվան տոնեց Հոկտեմբերյան հեղափոխության 72-րդ տարեդարձը, չգզաց մեր խռովահույզ դրույթները, մեր վիշտը, չհմացավ, որ 1988թ. փետրվարյան օրերին Ադրբեջանի խառնախմբի հարձակումից ու սոււզայից ցեղասպանությունից հետո մեր քաղաքի բոլոր բազմաթիվ շենքերի մուտքերում երկաթյա դարպասներ են դրվել, բոլոր խանութների դռներն ու ցուցափեղկերը երկաթաձողացանցով ծածկվել, որ բոլոր թաղամասերում պահակակետեր են ստեղծվել, և հսկում են բնակչության անվտանգությունը, իսկ Կենտկոմը նոր է խոսում խորհրդային ժողովրդի վստահ ու ապահով զգալու մասին:

14.12.1989թ.: Շրջափակումը շարունակվում է: Մամուլից իմացա, որ դեկտեմբերի 13-ի տվյալներով Բարդալի երկաթուղիներում կանգնած են ԼՂԻՄ-ի հասցեով առաքված 72 վագոններ, որոնցից 32-ը բեռնված են նավթամթերքներով, իսկ մեզ մոտ մի լիտր նավթ կան բենզին չէք գտնի:

15.12.1989թ.: Թերթի այսօրվա համարում («խորհրդային Ղարաբաղ») տրված է «Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի խՍՀՄ ժողովրդական ղեկավարատների «Բողոքը», որի մասին հեռախոսակապով թերթի թղթակցին պատմում է ժողովուրդատ Զորի Բալայանը: Խոսքը վերաբերում էր նրան, թե ինչու մեր ժողովրդական ղեկավարները համագումարի աշխատանքի երկրորդ օրը չեն մասնակցել համագումարին:

Ինչպես վերևում նշեցի, համագումարի առաջին օրը մեր ղեկավարները հրապարակել են հայտարարություն, որտեղ բողոք են հայտնել խՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից 1989թ. նոյեմբերի 28-ին ընդունված «ԼՂԻՄ-ում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» որոշման առթիվ: Զորի Բալայանն ընդգծում է՝ ԼՂԻՄ-ում, այլ ոչ թե Ադրբեջանում, որտեղ շարունակվում են շրջափակումը, բռնությունը, արմատական՝ ոչ ադրբեջանական բնակչության տեղահանությունը: Հայտարարությունից հետո ղեկավարատ Սորջալը համագումարի քննարկմանն առաջարկեց շրջափակումը վերացնելու մասին հարցը, որը մերժվեց համագումարի կողմից: Դեպուտատ Արթուրի առաջարկությամբ որոշվեց ծայր առած բանավեճը չհաղորդել հեռուստատեսությամբ: Հաջորդ օրը մեր ղեկավարատները չգնացին համագումար, այլ համագումարին և խՍՀՄ ԳԽ նախագահին հղեցին մի նամակ, որտեղ ասված է. «... Մենք խորապես համոզված ենք, որ համագումարը չէր կարող մերժել շրջափակման՝ որպես պատերազմի և բռնության տարրի, վերացման մասին ղեկավարատ Ա.Ա. Սորջալի հիրավի մարդասիրական առաջարկը, եթե պահպանվելով պաշտամենտական և դեմոկրատական սկզբունքները՝ ղեկավարատները մանրամասնորեն տեղեկացված լինեին ռեզիդենտ տիրող գործերի վիճակի մասին, այն կազմության մասին, որի մեջ հայտնվել են մեր հայրենակիցները, առանձնապես երկրաշարժից տուժած շրջաններում:

«Բողոք»-ում հիշեցվում է, որ խՍՀՄ Գերագույն խորհուրդը հոկտեմբերի 5-ին հատուկ որոշում է ընդունել շրջափակման վերացման անհետաձգելի միջոցառում-

ների մասին, սակայն այդ որոշման ընդունումից հետո շրջափակումն էլ ավելի այլաճակալ ձևեր է ընդունել: Դադարեցվեց աղետի գոտում հացահատիկի ու վառելիքի վազոնակազմերի ստացումը: Ջարդոտվում էին ոչ միայն շինանյութերով, այլև վերջույթներից զրկված երեխաների համար նախատեսված պրոթեզներով բեռնված վագոնները: Մեր ղեկավարատները Գորբաչովին հասկացնում են, որ իրենք խՍՀՄ ժողովուրդատների երկրորդ համագումարի աշխատանքներին չեն մասնակցի և Մոսկվայում կմնան այնքան ժամանակ, քանի դեռ Գորբաչովը անձամբ բոլոր անհրաժեշտ միջոցները չի ձեռնարկի Հայկական ԽՍՀ ու Լեռնային Ղարաբաղի երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների շրջափակման վերացման ուղղությամբ: Բողոքն ստանալուն պես նույն օրը Գորբաչովը ընդունեց հայ ղեկավարատներին և հայտնեց, որ երկրորդ համագումարին Գերագույն խորհրդին հանձնարարել է փակ նիստում անհետաձգելիորեն անդրադառնալ ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև նրա շուրջը ստեղծված իրավիճակին առնչվող պրոբլեմների քննարկմանը:

Ինչպես տեսնում ենք, դարձյալ խոստումներ, և Ղարաբաղի շուրջը ստեղծված վիճակի մասին է խոսվում:

16-17.12.1989թ.: Հետևում ենք համագումարի աշխատանքին, թերթում ընթերցում ենք Մ.Հարությունյանի ելույթը ժողովուրդատների 2-րդ համագումարի դեկտեմբերի 15-ին նիստում:

19.12.1989թ.: Ն.Ռիժկովի եզրափակիչ խոսքը համագումարում:

20.12.1989թ.: Շրջափակումը շարունակվում է, իսկ երկաթուղայիններն էլ դեռ նոյեմբերի վերջից գործադուլի մեջ են, քանի որ Եվախից և Ադրբեջան կարմիր լույս է վառված Ղարաբաղի համար:

25.12.1989թ.: Կայացավ խՍՀՄ ԿԿ պլենում, որը քննարկեց Լիովայի կոմկուսի 20-րդ համագումարի որոշումների հետ կապված հարցեր:

27.12.1989թ.: Մ.Ս.Գորբաչովի եզրափակիչ խոսքը ժողովուրդատների 2-րդ համագումարում:

28.12.1989թ.: «խորհրդային Ղարաբաղ»-ում տրված է Մ.Ս. Գորբաչովի գեկուցման տեքստը խՍՀՄ ԿԿ պլենումում՝ «Կուսակցության միասնություն մեջ վերականգնումն բախտն է»: Ընթերցում են ու զարմանում. մեզ մոտ կոմունիստները մեկ-մեկ, խմբովին փետրվարյան օրերից սկսած մտնում են «խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրություն ու միջանցքում ցած դնում կուստոմները, բայց կուսակցության ԿԿ գլխավոր քարտուղարը միասնության մասին է խոսում, իսկ Արցախը՝ «Ленин, партия-ничего»:

30-31.12.1989թ.: Չնայած մենք դժգոհ ենք Գերագույն խորհրդի նոյեմբերի 28-ի որոշումից, դժգոհում ենք ժողովուրդատների 2-րդ համագումարի աշխատանքներից, բայց պահպանում ենք մարդկային բոլոր նորմերը, իսկ դրան հակառակ Ադրբեջանը կոխկրտում է ամեն ինչ. բացի հակահայկականից մա հակախորհրդային կոպիտ ու անտաշ քայլեր է կատարում: Սկսած դեկտեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 31-ը Արաբսի երկարությամբ սահմանային կառույցներ են քանդում, սպանում են ռուս սահմանապահներին, բռնաբարում կանանց ու աղջիկներին, հայտարարում են, որ 17 հազ. հեկտար հողը չեն տա ռուսներին, այլ կօգտագործեն ցանքի տակ: Միաժամանակ քանդում, ոչնչացնում են հայկական մնացած եկեղեցիները, մատուռներն ու գերեզմանները: Երկրամասը լրիվ մաքրվում է հայերից ու հայկական պատմական հուշարձաններից, մշակութային արժեքներից: Օրագրումս ընդգծված է. «1989թ. դեկտեմբերի 4-ից մինչև 31-ը ադրբեջանցիները Լախիջևնում 800 կիլոմետր երկարությամբ քանդել ու ոչնչացրել են Իրանական սահմանը»:

Ահա այսպիսին էր մեր Շարժման 2-րդ դեկտեմբերը: Թե ինչ է սպասվում նոր՝ 1990 տարում, չգիտեմ...

Մալուկ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Մշակույթի վաստակավոր աշխատող

ՀԱՅ ԵՐԳԻ ՉՍԱՐՈՂ ԱՐԵՎԸ



Հայոց մշակույթի վեհաշուք կոթողը կերտած հազարավոր երախտավորների թվում կան եզակի անուններ, որոնց քիչ է տոսկ բանաստեղծ անվանելը, կոմպոզիտոր կամ ճարտարապետ, ոչ էլ նույնիսկ կոչել հանճար, որովհետև նրանց առաքելությունը վեր է, քան զուտ արվեստում կատարելության սահմանի նվաճումը: Այդպիսին է Կոմիտաս վարդապետը: Մարդ, ով ավելին դարձավ հայ ժողովրդի համար, քան հանճարեղ երգահան: Ֆենոմենալ անձ ու երևույթ, որի հայտնություններով բովանդակ ազգը կարողացավ վերագտնել մշակութային ինքնության ու հոգևոր ակունքների կորսված եզերքը:

Չկա մի հայ մարդ, որ կյանքում գոնե մի քանի անգամ արտասանած չլինի նրա անունը: Կոմիտասի մասին խոսում են բոլորը, նույնիսկ նրանք, ովքեր տեղյակ էլ չեն նրա իրական մեծությանը: Նրա միայն անունը զգաստացնում է մարդկանց, ստիպում կանգ առնել ու խորհել:

Կոմիտասի մասին խոսում են մանուկն ու մեծը, դպրոցականն ու ուսանողը, երգահանն ու ճարտարապետը, նրա ստեղծագործությունների քաղցրահնչյուն ու վշտամորմոք մեղեդիները հնչում են մաճկալի ու շինականի շուրթերից, շնկշնկում սարից իջնող գետակի զուլալ ջրերի պես, մերթ սարի հովերի ման մոմնջում, մերթ սվավում ալեծածան արտերի պես: Նրա կախարդական սրինգը մերթ հնչում է վառ ու նրբին, մերթ՝ սրտակեզ լալիս, հեկեկում, մերթ երգում է մրմունջով, մերթ հնչում որպես չնաշխարհիկ, հոգեզնայլ, մեղմիկ եղանակ...

Կոմիտասը յուրահատուկ մեծություն է: Ու հենց նրա ինքնատիպությունն ընդգծելու, հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ նրա դերի, բանահավաքչության գործում նրա անգնահատելի ավանդի մասին էր «Հայ երգի անմար աստղը» խորագրով ուսանելի միջոցառումը, որը կազմակերպվեց Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցում երաժշտության ուսուցչուհի Նաիրա Ղահրամանյանի նախաձեռնությամբ: Դպրոցի դահլիճը լեփ-լեցուն էր աշակերտներով, ուսուցիչներով, ծնողներով, հյուրերով: Միջոցառման բովանդակությանը մեծ շուք հաղորդե-

ցին համահունչ ձևավորված բեմը, պաստառները, լուսավորվածությունը, մեծ վարդապետի կենդանի ծայնի ունկնդրումը, տեխնիկական միջոցների կիրառումը, միջոցառման կազմակերպչի բացման խոսքը, դպրոցի տնօրենի, հյուրերի հիացմունքը դպրոցականների խոսքի կուլտուրայի նկատմամբ, մեծ երգահանին բոլոր կողմերով ներկայացնելը, միջոցառման նպատակայնությունը: Անցյալի արժեքների ու հավիտյանի միջև սերտ կապի առկայությունը. ահա այն գաղափարը, որ ընդգծված էր միջոցառման ողջ ընթացքում:

Աշակերտները հենց սկզբից Պ.Սևակի «Անլուելի գանգակատուն» պոեմից արտասանեցին «Ղողանջ ավետիսի»-ն, որում խոսվում է հայ երկու հանճարների՝ Գ. Թումանյանի և Կոմիտասի, նույն թվականին Հայաստան աշխարհի տարբեր վայրերում միաժամանակ լույս աշխարհ



եկած մանուկների մասին, որոնցից մեկը հետագայում դառնալու էր հայ խոսքի, մյուսը՝ հայ երգի անմար աստղը:

Դպրոցի երաժշտական խմբակի սաները երգում են «Կաքավիկ»-ը ու այնքան լավ են երգում, որ թվում էր, թե մեծ երգահանի հոգեհամ ծայնն է տարածվում թուխ ամպերը ճեղքող արևի ճառագայթներով լուսավորված սարերում ու ծորերում, զարնան շնչով ներարկված է ողջ բնությունը, ու կարծրատուտիկ կաքավիկը ուստոտալով թռչկոտում է ծագունների հետ...

Ուշագրավ էր Նաիրա Ղահրամանյանի և դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Նարինե Գրիգորյանի երկծայն կատարմամբ Կոմիտասի «Հորովել»-ը դուդուկի քաղցրահնչյուն մեղեդիների նվազակցությամբ: Յուրաքանչյուր երգ, լինելով դա «Անձրևն եկավ շողալեն», «Շողեր ջան», «Ջա՛ն, գառնուկ», «Ալ այլուղս», «Շորոր», «Հով արեք, սարեր» կամ մեկ ուրիշը, որ երգվում էր աշակերտների և երաժշտության ուսուցչուհի Ն. Ղահրամանյանի խմբակցությամբ, ընդգծում էր վերջինիս երգ-երաժշտություն ուսուցանելու մանկավարժական մեթոդի իմա-

ցությունը, երգը բովանդակային առումով վերլուծելու կարողությունը:

Ուսուցչուհին սաների ուշադրությունը սևեռում է երգի ստեղծման միջավայրի, ժամանակաշրջանի յուրահատկություններին, ծանոթացնում երգարվեստի նրբություններին, նրանց սովորեցնում հույզով և ըմբռնունով ներկայացնել երգը:

Միջոցառմանը մի առանձին շուք և իմաստ էին տալիս Կոմիտասի մասին տեղեկությունները և նրան՝ որպես երաժշտական ազգագրական ռահվիրա ներկայացնելը: Հայա նրա կենդանի ծայնի ունկնդրումը... Հանդիսատեսը քարացած ունկնդրում էր մեծ վարդապետի գեղեցիկ շարականը... Այո՛,

Եվ մինչև հիմա որտեղ որ երգն էր, Այնտեղ էլ նա էր...

Այսուհետ արդեն որտեղ որ նա էր, Այնտեղ էր երգը:

1935թ. հոկտեմբերի 22-ին 20 տարի տևած աներևակայելի հոգեկան տառապանքներից հետո լուռ հեռացավ Կոմիտաս վարդապետը: Այսօր նրա հորելյանը նշելիս ժամն է գիտակցելու, որ նրա թողած հետագիծն ու պատգամները մոռանալը մեզ համար համազոր է մշակութային ինքնասպանության, իսկ հիշելն ու նրա ուղենշած ճանապարհով ընթանալը՝ ազգային ինքնության պահպանման ու հարատևման: Կոմիտասն իր ծննդով ու երգով վերածնեց ամբողջ հայ ժողովրդին: Եվ ինչպես Պ.Սևակը կասեր՝ «Նրա պարզևած լույսը դեռ երկար պիտի անդրադառնա պարզևողի դեմքին և արտացոլվի նրա հոգու մեջ»...

Կոմիտասյան երգի մեջ ժողովուրդը գտավ իրեն, ճանաչեց իր հոգին, իր ինքնությունը: Կոմիտասը սկիզբ է, որ վախճան չունի: Նա պիտի ապրի հայ ժողովրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի նրանով ինչպես այսօր, այնպես էլ հավիտյան:

Կոմիտասին հայ հանճար անվանելը դեռևս քիչ է, նա համաշխարհային համբավ ունեցող հանճարեղ երգահան է և Մեծ Մարդ: Նրա ստեղծագործությունները բոլոր ժամանակների իրական կյանքի արտացոլումն են և մեր երեխաների, ներկա և ապագա սերունդների շուրթերով կապրեն հավերժ:

Միջոցառմանը ներկա՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության լեզվի տեսչության մասնագետ Գեմյա Գալստյանը նշեց նրա դաստիարակչական նշանակությունը:

Հայ և համաշխարհային երգի չմարող արևի առջև շարունակում է գլուխ խոնարհել աշխարհն արար...

Էլմիրա ԳԱՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտի հ.12 հ/դ
վնթերն

Խոսք հիշատակի

ՄԻՔԱՅԵԼ ՍՈՒՐԵՆԻ ԲԱԼՅԱՆ



Դեկտեմբերի 15-ին երկրային կյանքին հրաժեշտ տվեց վաստակաշատ մանկավարժ Միքայել Բալյանը: Մի մտավորական, որ մինչև վերջ ապրեց ստեղծագործական ակունքով լի կյանքով:

Միքայել Սուրենի Բալյանը ծնվել է 1931թ. մարտի 1-ին Հարյուրի շրջանի Մեծ Թաղեր գյուղում: Ծննդավայրում էլ ստացել է միջնակարգ կրթությունը: 1953թ. ավարտել է Բաքվի մանկավարժական

ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը: Իր մանկավարժական բեղմնավոր գործունեությունը սկսել է հայրենի գյուղի դպրոցում, որտեղ էլ աշխատել է մինչև թոշակի անցնելը: Աշխատել է որպես ավագ ջոկատավար, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, երկար տարիներ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն: Նորի, առաջավորի առաջամարտիկ մանկավարժ էր Մ. Բալյանը: Հայոց լեզվի և գրականության նրա դասավանդման առաջավոր փորձն ընդհանրացվել ու տարածվել է Արցախի դպրոցներում:

Իր մանկավարժական ծանրակշիռ գործունեության ողջ ընթացքում նա զբաղվում էր լրագրությամբ: Պարբերաբար հանդես էր գալիս Արցախում լույս տեսնող թերթերում, «Լուսարարի» ակտիվ թղթակիցներից էր: Տպագրվում էր նաև հայաստանյան մամուլում: Իր տարաբնույթ հոդվածներում նա բարձրացնում էր մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության հետ կապված իր նկատառումները, բացահայտում հաջողություններն ու բացթողումները: Մասնավորապես նա մտահոգ էր հայոց արքայական լեզուն անաղարտ, օտարամոլությունից զերծ պահելու ազգապահպան խնդրով: Անդրադառնում էր նաև սովորողների ընտանեկան ճիշտ դաստիարակությանը, ուսուցչի՝ ինքնակրթության կարևորությանը, դասի արդյունավետության բարձրացման ապահովմանը և շատ այլ կարևորագույն հարցերի:

Կյանքը ուժգին հարվածել էր նրան: Տարիներ առաջ ավտոկարից զոհվեցին նրա երկու զավակները, հարսը, սիրտուն թոռնիկը: Առժամանակ հետո վախճանվեց կինը: Գերմարդկային այդ վիշտը Մ. Բալյանը տարավ արիաբար: Նա շարունակում էր ստեղծագործել՝ մատը ժամանակի զարկերակին:

Անդուլ մանկավարժն աշխատում էր՝ ստեղծագործելով արձակ ու չափածո ժանրերում՝ բանաստեղծություններ, պատմվածքներ, ակնարկներ, դիմանկարներ: Վերջին տարիների նրա գրական հունձքն ամփոփվել է երկու գրքում՝ «Ամոռաց անուններ, խոհեր, մտորումներ» և «Միշտ մեզ հետ են, մեր կողքին»:

Նրա մանկավարժական կեսդարյա հարուստ փորձն ու գիտելիքները արժանավույն են գնահատվել. անվանի մանկավարժն արժանացել է պատվավոր կոչումների՝ «Ավագ ուսուցիչ», «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ», պարգևատրվել է ԼՂՀ վարչապետի մեդալով, բազմիցս՝ պատվոգրերով ու զովասանագրերով: Գնահատվել է նաև արժանավոր մտավորականի լրագրողական վաստակը: Տարիներ շարունակ նա թղթակցել է ՀՀ «Հայ գիմվոր» շաբաթաթերթին, Արցախում լույս տեսնող «Մարտիկ» ու «Հայրենյաց պաշտպան» թերթերին, այլ պարբերականների: Նրա հեղինակած տասնյակ ակնարկների ու դիմանկարների շարքը մի յուրօրինակ դյուցազնապատում է, որի հերոսներն Արցախյան գոյամարտի սուրբ նահատակներն են, անհետ կորած ազատամարտիկները, հաղթանակն իրենց բազկի ուժով կռած և պատվով ու փառքով տուն դարձած բյուրավոր մարտիկները: Եվ Մ.Բալյանի պարզևերին ավելացել է ՀՀ Զինված ուժերի «Մարշալ Բաղրամյան» մեդալը:

Դեռացավ բազմավաստակ մտավորականը՝ թողնելով արժանի վաստակ, իրեն բարի ճանաչողների սրտում՝ անմոռաց անուն:

Հանգչի՛ր խաղաղությամբ, հարգարժան ուսուցիչ: Թող հայրենի հողը թեթև ընդունի Ձեզ իր գրկում:

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ

Իմ տեսչական աշխատանքային գործունեության ընթացքում բազմիցս եմ առնչվում ուսուցիչների, որոնք դժգոհում են դպրոցական դասագրքերում զետեղված «Տեքստ, պարբերություն» թեմաների ուսումնասիրման, գործնական ուսուցման համար դասագրքում թեմայի ոչ լիարժեք պարզաբանումից ու ընկալման դժվարությունից, մանավանդ՝ գրավոր խոսքում պարբերության առանձնացման սկզբունքներից: Ուսուցիչների մի մասը խուսափում է այս թեմայից, և ինքնըստիճան երկրորդական պլան է մղվում գրավոր խոսքում պարբերությունների առանձնացման սկզբունքների ուսուցանումը: Համարյա բոլոր դասարաններում ուսուցիչները թելադրության ժամանակ հուշում են աշակերտներին: Հաճախ նույնիսկ 12-րդ դասարանում տեսչական թեմատիկ թելադրության տեքստը թելադրելիս հուշում են նոր պարբերության մասին՝ մեղավոր տոնով արդարանալով՝ դեռ չեն անցել: Եվ ականայից հարց է առաջանում՝ իսկ ե՞րբ են անցնելու:

Հանրակրթական դպրոցի հայոց լեզվի ուսումնական ծրագրերում մի քանի անգամ, սկսած 2-րդ դասարանից (Մայրենի, էջ 46), 5-րդ դասարանում (Մայրենի, էջ 19) անդրադարձ է կատարվում «Տեքստ» թեմային, իսկ 10-րդ դասարանի հայոց լեզվի դասագրքերում (և՛ հումանիտար, և՛ բնագիտական) «Պարբերություն» թեմայի տակ խոսվում է տեքստի հիմնական բաղադրիչ միավորի, պարբերության, պարբերությունների առանձնացման (այդ մասին կխոսվի ստորև) և պարբերության նախադասությունների կապակցման միջոցների մասին:

Երևի թե թեմայի լիարժեք բացահայտման համար շփոթության տեղիք է տալիս նաև Ֆ.Խլիպաթյանի «Հայոց լեզու», 8-րդ դասարան, 1999թ., նախկին դասագրքում զետեղված հետևյալ միտքը՝ «Գրավոր տեքստում յուրաքանչյուր պարբերությամբ առանձնացվում է տեքստի մյուս մասերից՝ առաջին նախադասությունը գրելով նոր տողի խորքից: Այս իմաստով տողի խորքից գրելը հանդես է գալիս որպես ուղղագրական երևույթ» (էջ՝ 118) և նույն դասագրքում «Կետադրություն» թեմայի տակ տեղ գտած հետևյալ միտքը՝ «Չմայած հատուկ գրանշան չունի, բայց բացահայտության մշանների ցանկում պիտի դրվի նաև պարբերությունը, քանի որ դա ևս կապված է գրավոր խոսքի իմաստային տրոհման հետ» (էջ՝ 146): Մենք ևս կարծում ենք, որ պարբերության՝ նոր տողից գրելը տրոհության արտահայտություն է, հետևաբար՝ գրավոր խոսքում այն պետք է համարել որպես կետադրական երևույթ:

Եվ այսպես, պարբերությունը լեզվական ինքնուրույն միավոր է, ու նրա կառուցվածքային առանձնահատկությունները բացահայտելու համար այն պետք է դիտարկել տեքստի մեջ, տեքստն ամբողջացնող իմաստային ու ձևական կապակցությունների մեջ:

Պարբերությունը չունի քերականական հատուկ ձևավորվածություն և կառուցվածքային պարտադիր ինչ-որ սխեմաներ: Սովորաբար պարբերության արտաքին մշանը գրաֆիկական սահմանն է, այսինքն՝ տեքստի, այսպես կոչված, մի գծից մյուսն ընկած լինելը, նաև՝ ընթերցման ժամանակ պարբերությունների միջև եղած չափից ավելի երկար դադարները: Երբ ասում ենք, թե պարբերությունները չունեն քերականական հատուկ ձևավորվածություն, սա չի նշանակում, թե դրանք ընդհանրապես զուրկ են որևէ ձևավորվածությունից և հանդես չեն գալիս որևէ կոնկ-

րետ ձևի մեջ: Բավական է միայն նշել, որ դրանք քերականորեն ձևավորված են կամ որպես մի նախադասություն (նման դեպքերում պարբերությունը և նախադասությունը նույնանուն են) կամ նախադասությունների ինչ-որ խումբ են, որի անդամների միջև գոյություն ունեն կապակցական հարաբերություններ:

Պարբերությունն ամբողջական միտք արտահայտող տեքստի հատված է, որի ավարտը բնական դադար է ստեղծում տեքստի հաջորդ՝ այլ միտք արտահայտող հատվածին անցնելու համար:

Պարբերության միջոցով ընթերցողին սովորաբար հաղորդվում է ինչ-որ նոր բան, որը կամ կարող է կարևոր լինել տվյալ հատվածի սահմաններում, կամ՝ ամբողջ ստեղծագործության, կամ կարող է ինքնին այնքան էլ կարևոր չլինել, այլ ունենալ միայն օժանդակ լրացական, մեկնաբանական և (կամ) միավորող նշանակություն: Ինչպես որոշ ծավալի որևէ ավարտուն գիտական կամ գեղարվեստական տեքստ, օրինակ՝ պատմվածքը, որն ունի որոշակիորեն կազմակերպված իր սկիզբն ու ավարտը, այնպես էլ ամեն մի պարբերություն կարող է ունենալ իր սկիզբն ու ավարտը: Պարբերության ծավալը արդյունք է մի շարք գործոնների՝ գրողի ոճի, մեթոդի, թեմայի, հաղորդման խոսքային կազմակերպման նպատակադրումի և այլն, այսինքն՝ կրում է հիմնականում անհատական բնույթ: Ինչ վերաբերում է այս կամ այն պարբերության զուտ գեղագիտական գործառնություններին, ապա այստեղ արդեն տեքստի ծավալը բացարձակապես կարևոր չէ, քանի որ, որպես կանոն, գեղարվեստական տեքստում որևէ միավորի ոճական նշանակությունը բոլորովին կապ չունի այդ միավորի ծավալային հատկանիշների հետ: Տեքստ-պարբերություն կազմակերպող դրսևորվում է տեքստի առաջադրած խնդիրներով: Առավել կարևորվում է պարբերություն-նախադասություն կազմակերպող, քանի որ այստեղ առկա են տարբեր պարբերությունների՝ միմյանց նկատմամբ եղած հարաբերությունները, դրանց կազմի մեջ մտնող նախադասությունների՝ իրար նկատմամբ եղած հարաբերությունները, արդեն հայտնի և նրան հաջորդող նոր հաղորդման միջև եղած կապերը, պարբերություն կազմող նախադասությունների ընդհանրություններն ու տարբերությունները և տեքստի հնչերանգի նկատմամբ դրանց ազդեցությունները:

Պարբերությունը սովորաբար առանձնացվում է հեղինակի կողմից և **գրավոր տեքստում գրվում է նոր տողից**: Իսկ բանավոր տեքստում պարբերությունը առանձնացվում է հնչերանգային ձևավորմամբ, ավելի կոնկրետ՝ դադարով: Բանավոր տեքստում դադարը նախադասությունների միջև ավելի փոքր է, քան պարբերությունների միջև: Պարբերությունների առկայությունը տեքստը դարձնում է ավելի կուռ. այն ավելորդ երկարաբանություններից խուսափելու և նոր թեմայի անցնելու հիմնական միջոց է: Սակայն հաճախ նոր պարբերությունը կարող է ներկայացնել ոչ միայն նոր թեմա, այլև նախորդ թեմայի կապակցությամբ լրացուցիչ, բացահայտող դրույթներ:

Պարբերության սկիզբ պետք է համարել նոր, նախկինում չհիշատակած անուն կամ առարկա: Պարբերությունների մեջ կան նախադասություններ, նույնիսկ բառեր, որոնք իրենց իմաստաբանական շարահյուսական գործառնությամբ գերակշիռ դեր են կատարում և իրենց վրա են կրում պարբերության հա-

ղորդման ամբողջ ծանրությունը: Դրանք փաստորեն պարբերության այն օղակներն են, որոնք ավելի ինքնուրույն են: Պարբերության մեջ կարող են մտնել շարահյուսական տարբեր կառուցվածք ունեցող նախադասություններ, որոնք կարող են պատկանել հաղորդակցման տարբեր տեսակների: Պարբերությունների նախադասությունների կապերի սերտությունը պայմանավորվում է տարբեր միջոցներով ու եղանակներով: Առաջին հերթին պարբերության նախադասությունները միահյուսվում են իմաստներով: Կարևոր են նաև գործողությունների տրամաբանական հաջորդականությունը, նախադասությունների շարահյուսությունը, դերանունների, շաղկապների, վերաբերականների, հոմանիշ բառերի գործածությունը, զեղչումները, կրկնությունները: Պարբերություններում կարող են արտահայտված լինել նկարագրություններ, թվարկումներ, որոնց միջև կան **միաժամանակության** կամ **հաջորդականության հարաբերություններ**: Պարբերություններն առանձնացվում են տարբեր սկզբունքներով:

1. Մի դեպքում հեղինակը կարող է տեքստի առաջին նախադասությունը որպես ինքնուրույն պարբերություն առանձնացնել որևէ միտք, դեպք, նկարագրություն ընդգծելու, մյուսներից առանձնացնելու նպատակով: Նման օրինակներ շատ ունենք հայ գրականության գոհարների մեջ: Օրինակ՝ Ալսել Բակունցի «Միրհավի», Հովհաննես Թումանյանի «Գիքորի», Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառսի» առաջին նախադասություն-պարբերությունները, ինչպես՝

Աշուն էր, պայծառ աշուն...
Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել:

Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր:
2. Մեկ այլ դեպքում պարբերությունը կարող է առանձնացվել այն պատճառով, որ սկսվում է նոր միտք կամ նկարագրություն, որը չի առնչվում նախորդ պարբերության նյութին:

3. Նոր պարբերության հիմք է դառնում նաև մեջբերվող խոսքը, քանի որ գծիկով գրվող ամեն մի մեջբերվող խոսք առանձնացվում է:

4. Պարբերության մեջ ի հայտ է գալիս նոր կերպար, որը կարող է լինել անձ, կենդանի կամ բնության որևէ երևույթ:

5. Պարբերությունը ներկայացնում է նախորդ պարբերությունից տարբեր ժամանակահատված:

6. Պարբերության մեջ շեշտվում է գործողության կատարման վայրը, որը նախորդ պարբերության մեջ այլ է եղել:

7. Պարբերությունն սկսվում է **մի անգամ, մի օր, մի երեկո** և մնանատիպ կապակցություններով:

8. Տեքստի վերջում նոր պարբերությամբ է գրվում հեղինակային եզրակացությունը, որը կարող է սկսվել **այսպիսով, ցավոք, այո, դա, այսպիսի, ու, և, ասում են** բառերով ու կապակցություններով կամ տեքստի միտքը եզրափակող մեջբերվող խոսքով:

Ալսել Բակունցի «Միրհավը» գողտրիկ պատմվածքի մի հատվածի օրինակով նշենք հեղինակային պարբերությունները և դրանց տարբերակման մեր հիմնավորումները:

1. Աշուն էր, պայծառ աշուն...
2. Օղը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համրել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմիրն տվող մարտնու թփեր:
3. Աշուն էր՝ տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները,

խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ: Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն: Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ծյունի շունչը:

4. Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում: Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ծայն հանում:

5. Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը:

6. Դիլան դային նստել էր հնձանի պատի տակ, ընկուզենու չոր կոճղին: Նա սովորություն ուներ ուշ աշնանը վերջին անգամ այգին մտնելու, դուռ ու ցանկապատ ամրացնելու և հնձանը փակելու:

7. Չորացած ոստերի և ցողունների մի կապ ժողովել էր, դրել մոտը: Եվ հոգնությունից հանգստանում էր՝ աչքը հեռու սարերին:

8. Աշնան արևը ջերմացնում էր նրան. ձորի խաղաղությունը դուրեկան էր: Ծառերին փաթաթված վագերն օրորվում էին քամուց: Դիլան դայու միտքն էլ տարուբեր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև:

9. Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագնեա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսափից:

10. Մի քանի անգամ մոտեցավ, կամեցավ նրա հետ խոսել, բայց Սոնան խույս տվեց:

11. - Թող, Դիլան, գնա քեզ համար...

12. Եվ էլ իրար չտեսան:

Առաջին պարբերությունն արտահայտված է մեկ նախադասությամբ: Հեղինակը այս պարբերություն-նախադասության առանձնացումով ընթերցողին նախապատրաստում է հաջորդող գործողություններին: **Երկրորդ պարբերությունն** արտահայտում է նոր միտք, որը չի առնչվում նախորդ մտքին: **Երրորդ պարբերությունն** սկսվում է բնության, կոնկրետ՝ աշնան նկարագրությամբ: **Չորրորդ պարբերության** մեջ նշվում է գործողության կատարման վայրը՝ այգին: **Հինգերորդ և վեցերորդ պարբերությունների** մեջ նոր գործող կերպար է արևածաղիկը, ապա՝ Դիլան դային: **Յոթերորդ պարբերությունը** նախորդից տարբերվում է ժամանակային կտրվածքով. գործողությունը կատարվում է նկարագրության պահին: **Հաջորդ պարբերությունն** արտահայտում է նոր միտք՝ բնության նկարագրություն: **Իններորդ պարբերությունը** նոր կերպար է՝ նա: **Տասներորդ պարբերությունը** նոր միտք և նոր կերպար է ներկայացնում՝ Սոնան: **Տասնմեկերորդ պարբերությունը** մեջբերվող խոսք է, որն ունի նաև յուրահատուկ կետադրություն: **Տասներկուերորդ պարբերությունը** նորից նոր միտք է և տեքստի տվյալ հատվածի եզրափակումը:

Այսպիսով, պարբերությունը միմյանց հետ զանազան շարահյուսական-իմաստաբանական կապակցության մեջ գտնվող նախադասությունների խմբավորում է, որը, բխելով ընդհանուր տեքստի բովանդակությունից, կոնկրետ կոնտեքստային իրադրություններում կարող է դառնալ նոր որակ, նոր կապեր ու հարաբերություններ դրսևորող մի նոր հանգույց:

Ելիզավետա ՄԻՐՋՈՅԱՆ
ԿԳՍ Նախարարության ԿՊՏ
հ. Լեզվի և գրականության տեսուչ,
բ.գ.թ.

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲԱՅ ԴԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՉՐԱՅՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑ

Բաց պարապմունքները շատ կարևոր են: Դրանք հնարավորություն են ստեղծում առաջավոր փորձի ընդհանրացման, տարածման դաստիարակների միջև արդյունավետ համագործակցության համար:

Դեկտեմբերի 12-ին Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Ա. Գոլմեֆյանի նախաձեռնությամբ կազմակերպված հերթական բաց պարապմունքները ճարտարի ենամուել ղը Լամբառի անվան հ. 2 մանկապարտեզում էին, ավագ և միջին խմբերում: Ավագ խմբում՝ գրաճանաչություն պարապմունքից, թեման՝ «Ձայնավոր հնչյունների ամրապնդում» (դաստիարակ՝ Էլոնա Սադյան), միջին խմբում՝ մաթեմատիկայից, թեման՝ «1-3 թվերի ամրապնդում» (դաստիարակ՝ Զրանուշ Զամբարձունյան):

տնօրենները, դաստիարակներ:

Երկու խմբերում էլ պարապմունքները կազմակերպվել էին ծրագրին համապատասխան, նկատելի էին դաստիարակների աշխատանքը, նվիրվածությունը, երեխաների նկատմամբ անսահման սերը:



Բաց պարապմունքները հիմնականում օգնելու նպատակ ունեն: Նման պարապմունքների դիտարկման ընթացքում դաստիարակների (հատկապես՝ սկսնակ) մեջ

լավ պարապմունք վարելու մրցակցություն է առաջանում, և նպաստում են դաստիարակի ինքնակատարելագործվելուն, ինքնակրթվելուն: Դաստիարակն ուսումնական գործունեության ընթացքում դրսևորում է անսպասելի հետաքրքրասիրություն: Բաց պարապմունքները նպաստում են ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Որքան էլ բանիմաց լինի դաստիարակը, բաց պարապմունքների ժամանակ նրա մոտ առաջանում են նոր գաղափար, նոր միտք, նոր պատկերացումներ, և դրանք վերարտադրելով՝ կիրառում է ուսումնական գործունեության ընթացքում: Սովորելու և հետազայում դրանք իրենց պարապմունքներին իրականացնելու շատ բան վերցրին հատկապես սկսնակ դաստիարակները: Մնում է շնորհակալություն հայտնել ճարտարի հ. 2 մանկապարտեզի մանկավարժական կազմին, տնօրենությանը՝ ջերմ ընդունելության և հետաքրքիր պարապմունքների համար:

Անուշ ԲԱՍՏԱՆՅԱՆ

ԲԱՂԱՔԱՅԻՆ ԲԱՅ ԴԱՍ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻՑ

Դեկտեմբերի 9-ին Ստեփանակերտի Յու.Պողոսյանի անվան հ. 6 հիմնական դպրոցի 5-րդ «բ» դասարանում անցկացվեց քաղաքային բաց դաս «Մաթեմատիկա» առարկայից: Դասը վարում էր փորձառու ուսուցչուհի Զինաիդա Աթանեսյանը: Դասն անփոփոխ էր, թեման՝ «Երկրաչափական պատկերներ»:

Ուսուցչուհու ողջույնից հետո դասն սկսվեց «Յետաքրքրաշարժ երկրաչափություն» մուլտիմիդի դիտումով, որտեղ ասվում է, թե ինչու է պետք սովորել և իմանալ երկրաչափություն: Չէ՞ որ շուրջը լորն իրենց ուրվապատկերներն ունեն. կարելի է ամեն ինչ գծագրել, իսկ հետո չափել և իմանալ առարկաների չափերը, լայնությունն ու երկարությունը, բարձրությունն ու ծավալը: Առանց երկրաչափության չենք կարող տուն կառուցել, նույնիսկ տիեզերք դուրս գալ:

Մուլտիմիդի դիտումից հետո ուսուցչուհին հարցադրումների միջոցով ամրապնդեց աշակերտների գիտելիքները երկրաչափությունից, որից հետո ստուգեց տնային աշխատանքները: Հանձնարարված էր կառուցել պատկեր՝ օգտագործելով երկրաչափական պատկերները: Աշակերտները ներկայացրին դրանք՝ նշելով, թե ինչ երկրաչափական պատկերներ են օգտագործել նկարը կառուցելիս:

Բանավոր հարցման մասում աշակերտները ցուցաբերեցին ձեռք բերած գիտելիքները «Հատված», «Ճառագայթ», «Ուղիղ», «Հարթություն», «Շրջանագիծ և շրջան», «Անկյուններ», «Բեկյալ գծեր և բազմանկյուններ» թեմաներից:

Այս գրեցին մաթեմատիկական թելադրություն: Իսկ հետո տե-

սասահիկի միջոցով լուծեցին մաթեմատիկական խաչբառ, որն ուսուցչուհին պատրաստել էր դասի թեմայի վերաբերյալ:

Խնդիրները լուծելիս օգտագործվեցին և՛ տեսասահիկը, և՛ դասագիրքը:

Այնուհետև կատարվեց խմբային աշխատանք: Ուսուցչուհին դասարանը բաժանեց խմբերի և ամեն խմբի տվեց մեկ բազմանկյուն հետևյալ հարցադրումներով.

ա) Քանի՞ անկյուն ունի այդ բազմանկյունը:

բ) Քանի՞ կողմ ունի այդ բազմանկյունը:

գ) Ինչպե՞ս է կոչվում այդ բազմանկյունը:

դ) Ինչքա՞ն մետաղալար կպահանջվի, որպեսզի կարողանանք

պատրաստել հենց այդպիսի բազմանկյուն:

Խմբային աշխատանքն ուղեկցվում էր երաժշտությամբ և անվանի մաթեմատիկոսների մասին տեսասահիկի ցուցադրմամբ:

Վերջում գնահատվեցին առավել ակտիվ աշակերտները, և հանձնարարվեց տնային աշխատանք:

Ուսուցչուհին նպատակ էր դրել աշակերտների մոտ սերմանել սեր մաթեմատիկայի նկատմամբ, քանզի ինչպես Լոմոնոսովն է ասել. «Մաթեմատիկան արժե սովորել նրա համար, որ այն կարգի է բերում հենց գիտակցությունը»: Հենց այս նշանաբանն էր ընտրել իր դասի համար Զինաիդա Աթանեսյանը, ինչը լիովին համապատասխանում էր իր դասավանդման գործընթացին:

Մերի ՀԱԿՈՒՅԱՆ

ԹՈՂ ԱՍՏՎԱԾ ԵՂԱԾԸ ԴԱՅԻ



Ասում են, երբ ծնվեց ուսուցչը, նրա գլխավերևում հայտնվեցին երեք փերիներ, որոնք գուշակեցին.

- Դու հավերժ երիտասարդ կլինես, քանի որ քեզ հետ միշտ երեխաներ կլինեն:

- Դու միշտ հոգով գեղեցիկ կլինես, քանի որ ողջ կյանքում երեխաներին գեղեցիկն են սովորեցնելու:

- Դու երջանիկ կլինես, որովհետև ձեռքերդ միշտ տաքանալու են մանուկների ատերի ջերմությունից:

Այս գրույցը երկի ստեղծել են այն մարդիկ, ովքեր իրենց կյանքի միակ նպատակը համարել են մանուկների աշխարհի ջահը վեհ պահելը և ամեն անգամ դպրոցական գանգի ողջույնների հետ են արժևորել իրենց կյանքի կարևոր պահերը: Այդ մարդկանց շարքում է Աշանի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լիանետա Իշխանյանը: Մանկավարժական գործունեության երկարատև ճանապարհ անցած ուսուցչուհին իր առաջին քայլերն արել է հարազատ գյուղի միջնակարգ դպրոցում, որտեղ այդ ժամանակ լավագույն մանկավարժի ուղեկցման արդեն դրել էին հանրապետությունում ամուսն հանած մի շարք ուսուցչուհիներ, որոնց հետ աշխատելը պարտավորեցնող էր և հետաքրքիր: Բնավորությամբ ճշտակատար, պարտաճանաչ, աշխատասեր, ուղղամիտ 20-ամյա ուսուցչուհին մեծ սիրով կապվեց իր աշխատանքին՝ նվիրվածությամբ ու համարձակությամբ աշակերտների հոգում ցանցելով ազգային և հայեցի դաստիարակության հունդերը դեռևս արդրեցիկ հարցերից:

Երբեմն դժվար է լինում սերունդ առ սերունդ հիշել բոլոր այն սաներին, որոնց հետ աշխատել է Լիանետա Իշխանյանը որպես ջոկատավար, ՄԿԱԳՏՏ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, բայց անկախ նրանից, թե ինչ մասնագիտություն են ընտրել, բոլորն էլ սիրով են հիշում այն դասերը, որոնք սիրելի ուսուցչուհին միշտ համեմուն էր հուզիչ սամունքով և անպայման՝ երաժշտական կատարումով:

Եթե հավելենք նաև, որ նա վերապրել է Արցախյան գոյապայքարի յուրաքանչյուր դրվագ՝ միշտ անբաժան մնալով հայրենի գյուղից ու դպրոցից, ապա կամբողջանա արցախցի ուսուցչուհու և իսկական հայուհու կերպարը:

Այս օրերին մեր սիրելի գործընկերուհին մեզ իր ծննդյան 60-ամյակը, և սա այն եզակի բացառություններից է, երբ տարիքը երկնից թվի տեսքով ընդամենը ժպտում է քեզ, իսկ իրականում նա մնում է սիրելիներով, թոռներով շրջապատված նույն երիտասարդ, անսպասելի հետաքրքիր ուսուցչուհին, որն ամեն առավոտ առաջինն է բացում ուսուցչանոցի դուռը, առաջինն է ներկայացնում սեղմագրերը, առաջինն է կատարում տնօրինության պահանջները և այս ամենը՝ մեծ սիրով ու նվիրվածությամբ:

Մեզ մնում է մանկավարժական կոլեկտիվի անունից շնորհավորել Լիանետա Իշխանյանին հոբելյանի առթիվ, հնչած բազմաթիվ բարեմաղաքներին պարզապես հավելելով. Թող Աստված եղածը պահի:

Արմինե ԱՎԱՆԵՍՅԱՆ Աշանի միջև. դպրոցի փոխտնօրեն, հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի

Շնորհավորանք ՍԻՐՈՎ ՈՒ ՆՎԻՐՈՒՄՈՎ



Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցողական և առարկան, ամենակենդանի օրինակը աշակերտի համար հենց ինքը ուսուցիչն է:

Արդի Դիստերվեզ

Հազվադեպ է պատահում, երբ մարդ հաջողում է ամեն բնագավառում՝ ընտանիքում, հասարակության մեջ, կոլեկտիվում: Դժվար է պատկերացնել, որ դեռևս կան մարդիկ, որոնք մոտ են հասարակության կողմից ստեղծված իդեալին: Սակայն փաստը մնում է փաստ, որ նա կա, ապրում է, ստեղծագործում մեր կողքին, օրինակ հանդիսանում բոլորիս...

Կիմ Հարությունյանը ծնվել է 1959թ. նոյեմբերի 8-ին Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում: 1975թ. ավարտել է գյուղի ութամյա դպրոցը: Սակայն ուսման հանդեպ ունեցած սերն ու ապագայի հանդեպ ունեցած երազանքներն ու պլանները նրան տարան մայրաքաղաք Ստեփանակերտ:

1975-1977թթ. Կիմ Հարությունյանը ուսումը շարունակել է Ստեփանակերտի Հովհ. Թումանյանի անվան հ. 9 միջնակարգ դպրոցում: Այն ավարտելով՝ 1977թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի հեռակա բաժինը:

1978-1980 թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Շատերի նման նա էլ զորացրվելուց հետո վերադարձավ հայրենի գյուղ, քանզի հայրենի եզերքը նրան տուն էր կանչում. չէ՞ որ օջախի ծուխը չպիտի հանգցնեք, որովհետև տան օջախի միակ տղան էր, միակ որդին: Հենց այդ պահից էլ զգացվում էր Կիմի պատասխանատվության չափը, նրա մարդ որակը, սերը դեպի հարազատները և հայրենի եզերք:

1982թ. սեպտեմբերին աշխատանքի է ընդունվել գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ, 1983-ից՝ գուգահեռաբար՝ նաև զինվել:

1988թ. Կիմ Հարությունյանը արցախցի հազարավոր երիտասարդների նման անդամագրվեց Արցախյան ազատագրական պայքարին: Վայր դնելով գրիչն ու մատյանը՝ նա ձեռքն առավ ինքնաձիգը: Համագյուղացիների հետ միասին սկզբից մինչև վերջ մասնակցել է Գոյապայքարին: Մասնակցելով բազմաթիվ մարտական գործողությունների՝ փառքով ու պատվով է կատարել իր առջև դրված խնդիրները: Նա շատ էր սիրում լուծել խնդիրներ, իսկ սա արդեն գոյի խնդիր էր, գաղափարի, հայրենի երկրի ազատագրման խնդիր: Ազատագրական պայքարում ցուցաբերած քաջության ու կատարած սխրագործությունների համար պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Երբ լուծում են գեները, պետք է անցնել առօրյա կյանքին, շարունակել կրթել ու դաստիարակել մատաղ սերնդին: Սա էլ է պայքար, այստեղ էլ են պետք հաղթանակներ:

Եվ 1995թ. Կիմ Հարությունյանը վերադարձավ դպրոց՝ շարունակելու կիսատ թողած գործը՝ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործը, որն այսօր էլ կատարում է մեծ սիրով ու նվիրվածությամբ:

Գնահատելով վաստակաշատ մանկավարժի ավանդը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում՝ 2019թ. հոկտեմբերի 5-ին ուսուցչի օրվա կապակցությամբ Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժինը Կիմ Հարությունյանին պարգևատրել է պատվոգրով:

Կնոջ՝ Ալվարդ Հարությունյանի հետ միասին նա սնել և դաստիարակել է երեք զավակների, որոնք իրենց կոլեկտիվներում սիրված ու հարգված են:

Կոլխոզաշենի Հրաչյա Բեգլարյանի անվան միջնակարգ դպրոցի կոլեկտիվի և սաները սրտանց շնորհավորում են Կիմ Հարությունյանին ծննդյան 60-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով նրան առողջություն, հաջողություն աշխատանքում և կյանքում, ընտանեկան երջանկություն:

Կոլխոզաշենի Հրաչյա Բեգլարյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական հանրույթ

ՀԱՎԵՐԺԻ ԶԱՄՓՈՐՂՆԵՐ

ՆԱՀԱՏԱԿ ՌԻՍՈՒՅՉԻ ՀԻՇՆԱՍԿԻՆ



Դեկտեմբերի 17-ին Ասկերանի եղմուն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում հուշ-միջոցառում էր նվիրված դպրոցի ուսուցիչ, զոհված ազատամարտիկ Ազատ Յովսեփյանի ծննդյան 55-ամյակին: Այն կազմակերպել էր դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Լիանա Կարապետյանը: Ներկա էին Ասկերանի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալներ՝ հերոսի դասընկերներ Վլադիմիր Բալասանյանը, Արթուր Դարբինյանը, Ասկերանի քաղաքապետ, ԱԱՄ Ասկերանի տարածքային միավորման նախագահ Սամվել Աղաջանյանը, ազատամարտիկներ, համադասարանցիներ, ուսուցիչներ, դպրոցականներ: Ներկայացրին այցելեցին զոհված հայրորդու շիրմին՝ հարգանքի տուրք մատուցելով նրա հիշատակին, ապա թարմ ծաղիկներ խոնարհեցին դպրոցի զոհված ազատամարտիկների պատվին կանգնեցված հուշատախտակին: Յուրաքանչյուրը մեկ թուղթ լռությամբ հարգեցին զոհվածների հիշատակը: «Նա ապրեց ընդամենը 27 տարի, սակայն ապրեց պատվով, արժանապատվով՝ թողնելով բարի ու վեհ անուն»,- բացման իր խոսքում ասաց Լիանա Կարապետյանը... Դպրոցականները անքող հպարտությամբ ներկայացրին հերոսի կենսագրությունն ու մարտական ուղին: Ազատ Յովսեփյանը ծնվել է 1964թ. դեկտեմբերի 15-ին Ասկերանում: 1982թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Բաքվի մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը: 1983-1985թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում՝ ծառայությունը կատարելով Ջավախքում: Ջողոթվելուց հետո շարունակել է ուսումը: Դաշնակցության շարքերում հարաբերությունների սրացման պատճառով Ազատը տեղափոխվել է Երևան և ուսու-

նը շարունակել էր Ռուսաստանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում: Ուսումն ավարտելուց հետո, 1989թ. վերադարձել է Ասկերան և աշխատանքի անցել Նորագյուղի միջնակարգ դպրոցում, ապա տեղափոխվել հարազատ դպրոց: Ազատին հարազատ դպրոցում գրկաբաց ընդունեցին: Երիտասարդ ուսուցիչն անմիջապես վայելեց աշակերտների համակրանքը: Դարաբաղում ստեղծված կացությունը գիտակցելով՝ դասերից հետո աշակերտների հետ հայրենասիրական ոգով զրույցներ էր անում: Արդեն կազմավորվել էին Ասկերանի ինքնապաշտպանական առաջին ջոկատները: Ազատն այդ ջոկատներից մեկում էր և աշակերտներին սովորեցնում էր արթնբեջանական խուճանի դեմ պայքարի ու պաշտպանության ծները: Իր խելքով, խիզախությամբ ու նվիրվածությամբ նա օրինակ էր հանդիսանում իր զինակից ընկերների և բարձր դասարանների աշակերտների համար: Ազատը մասնակցել է Խրամուրթի, Փառուխի, Աղզամի շրջանի Շելլի գյուղի համար մոլոր մարտերին: Ասկերանի համար դժվար այդ ժամանակաշրջանում նա իր մարտական ընկերների հետ կարողանում էր դիմակայել թշնամուն՝ նրան պատճառելով մեծ կորուստներ: 1992թ. հունվարի 30-ն էր: Ասկերանի ջոկատը պաշտպանում էր Խոջալու գյուղի մատուցները: Լարված և ցրտաշունչ օրեր էին, անեն օր զոհեր, վիրավորներ... Ազատը նոր էր վերադարձել դիրքերից, բայց որոշել էր տուն չգնալ, միանալ ընկերներին: չէ՞ որ դիրքերը պետք է ամրակալվեն հետախուզեցին: Գնաց հետախուզության ու... չվերադարձավ: Յովսեփյանների տան ճրագը մարեց: Միևուրժար որդին չէր հասցրել ընտանիք կազմել և մի մանուկ թողնել իր շեն օջախում: Ասկերանցիները լավ են հիշում Ազատի հոր՝ Սուրեն Յովսեփյանի թախանձագին խնդրանքը: Նա աղերսում էր բոլորին չներկայանալ հուղարկավորությանը և վտանգի չենթարկվել: Դեռուսին հողին հանձնեցին գիշերը մի քանի հոգով՝ աղոթք ուղղելով առ Աստված... Դպրոցականների ելույթներն առկայում էին պարծանքով, հավատով: Նրանք մեծարում էին հերոսին, բանաստեղծություններ ծնունդում նրա հիշատակին և երգվում էր: Աշակերտները խոստանում էին բոլոր ընկածների համար արժանի հետնորդներ լինել իրենց

երազանքներով, ուսմամբ, արժանավայել կեցվածքով: Ն գործամասի գինծառայող Ցուլակ Դարբինյանի հայրենասիրական երգը ոգևորեց ներկայիցին: - Անջափ հուզվեցի աշակերտների ելույթներից և խոր ցավ ապրեցի, որ կորցրել եմք մեր երիտասարդ ուսուցիչներից մեկին, որն այսօր ծանաչված մասնագետ ու մանկավարժ կլիներ: Մեր դպրոցում առողջ կուլեկտիվ էինք ձևավորել ու համալրել տղամարդ ուսուցիչներով, ինչը շատ կարևոր է ուսումնադաստիարակչական աշխատանքների համար: Նոր էր սկսվել պատերազմը, արդեն կորցրել էինք մեր դպրոցի սան Էդմունդին, հաջորդը Ազատն էր: Դպրոցի լավագույն շրջանավարտների կորուստը դժվարությամբ ընդունեցինք, իսկ հետո պատերազմն սկսեց իր սև գործը: Ազատի հետ չհասցրինք երկար աշխատել, բայց իմ հիշողության մեջ նա մնաց որպես պարտաճանաչ, ողջամիտ և կարգապահ ուսուցիչ: Մարդկային իր արժանիքներով նա կարողացավ մնալ աշակերտների և ուսուցիչների հիշողության մեջ,- ասաց Ազատի ուսուցիչ և գործընկեր Էդիկ Գաբրիելյանը: Միջոցառումն ուղեկցվում էր 12-րդ դասարանի աշակերտ Ալեքս Ծահրամանյանի պատրաստած սահկահանդեսով, որը ներկայացնում էր հերոսի մանկության, պատանեկան և ուսանողական տարիների նկարները: Գնացնումք խելդուն էր յուրաքանչյուրին... Տակավին երիտասարդ Ազատի երագլուտ աչքերն այնքան բան էին ասում, այնքան երագլուտներ ուներ և իր թախտոտ հայացքով ասես ցանկանում էր պատմել մեզ դրանց մասին... 12-րդ դասարանի աշակերտները Յուլիա Դարբինյանի և Սենժանա Թամրազյանի երգերը յուրաքանչյուր երանգներ էին հաղորդում միջոցառմանը ու ստիպում զգալ օրվա խորհրդի անեն մի վայրկյանը... Ազատի համադասարանցի Արթուր Դարբինյանն անհուն կարոտով և ցավով է խոսում ընկերոջ մասին: - Ինձ համար շատ դժվար է անցյալով խոսել Ազատի մասին: Ազատի հետ իմ հիշողություններն առանձնահատուկ են, քանի որ նրա հետ ընկերություն էինք անում մանկությունից: Միայն դպրոցն ավարտելուց հետո մեր ճանապարհները բաժանվեցին, բայց պատերազմը նորից միացրեց մեզ: Երբ սկսվեց Արցախյան շարժումը,

սկսեցինք բացեիքաց նախապատրաստվել կռվի, և Ազատն անվարան գեներ վերցրեց: Բոլորս լավ գիտենք, որ հակառակորդի ամենաթիրախային տեղերից մեկը Ասկերանի բնագիծն էր այն ժամանակ: ամեն գնով նա ցանկանում էր գրավել Ասկերանը և հասնել Ստեփանակերտ: Ազատը պատահական գնդակից չզոհվեց, թշնամին կանխամտածված էր պատրաստվել ռազմական գործողությանը, սակայն մենք կարողացանք վրեժխնդիր լինել նրանից: Դրա ապացույցները մեր հետագա մարտական հաջողություններն էին: Այսօրինակ միջոցառումները առհավատյան են այն բանի, որ մեզանից յուրաքանչյուրը, առանձնապես երիտասարդ սերունդը բարձր է գնահատում մեր տղաների հիշատակը՝ փոքր-ինչ մեղմելով այն վիշտն ու կսկիծը, որ ունեն նահատակների հարազատները: Դպրոցի տնօրեն Մարելա Ավանեսյանն իր խոսքում շեշտեց, որ Ազատ Յովսեփյանն այն ընտրյալն էր, որը լավ էր գիտակցում, որ անհնար է թուրք բարբարոսներին գրեթե լռեցնել, նրանց պետք է լռեցնել միայն զենքով: Նա ցած դրեց գրիչը ու գեներ վերցրեց: Ազատը զոհվեց, որ այսօրվա սերունդն ապրի ապահով, խաղաղ և ազատ երկրում, իսկ այն պարտավորությունը, որ գգում է այդ սերունդը զոհված տղաների հիշատակի առաջ, անհերքելի է ու անխախտ: Միջոցառման վերջում երախտագիտության խոսք ասաց հերոսի քույր Մարինե Յովսեփյանը: - Իմ շնորհակալությունն են ուզում հայտնել դպրոցի տնօրինությանը, միջոցառման կազմակերպիչներին և բոլոր նրանց, ովքեր եկել են հարգելու իմ միևուրժար եղբոր հիշատակը, որն այդպես էլ անհիշատակ գնաց այս աշխարհից: Սակայն ես այս երեխաներին, որոնք մեծ հիացմունք պատճառեցին մեզ, համարում եմ նաև Ազատի ու նրա բախտակից ընկերների թողած սերունդը և համոզվում եմ, որ նրանք շարունակելու են բարձր պահել զոհվածների հիշատակը: Ասկերանի եղմուն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպվեց հերթական արիության դասը: Դաս, որի նպատակը մեկն էր՝ գնահատել և մեծարել Արցախյան պատերազմում զոհված բոլոր հայրողիների հիշատակը և այդպիսով օրինակ հանդիսանալ գալիք սերունդների համար:

Կարինե ԲԱԽՇԻՅԱՆ

խոսք հիշատակի ՆԻՆԱ ԱՐՍԵՆԻ ՀԱՎՈՐՅԱՆ

Կյանքի 85-րդ տարում իր մահկանացուն կնքեց Սոսի միջնակարգ դպրոցի վաստակաշատ մանկավարժ Նինա Արսենի Դակոբյանը: Եությամբ և բնավորությամբ բարի ու մարդամտ անձնավորություն էր՝ օժտված բազում արհեստների իմացությամբ: Բարձրագույն կրթություն ստացած երեք զավակների մայր էր, հոգատար ու սիրասուն տատիկ և սիրով էր փոխանցում գիտելիքները բոլորին: Ն. Դակոբյանը ծնվել է 1934թ. մայիսի 28-ին Սոս գյուղում: 1951թ. գերագանց առաջադիմությամբ ավարտել է Սոսի միջնակարգ դպրոցը: 1952թ. ընդունվել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոֆակուլտետը: Այն ավարտել է 1957թ. գերագանցության դիպլոմով: Նինա Դակոբյանին առաջարկվեց մնալ աշխատելու ինստիտուտում, սակայն նա հրաժարվեց և վերադարձավ հայրենի գյուղ: 1957-1958 ուստարում աշխատանքի է անցել Սոսի միջնակարգ դպրոցում՝ որպես կենսաբանության ուսուցչուհի: 1961-1962 ուստարում դպրոցներում մտցվեց արտադրական ուսուցում: Նինա Դակոբյանը եռանդով ու նվիրվածությամբ լծվեց այդ գործին: Նշանակվեց արտադրական ուսուցման գծով ուսնասվար:

Ավագ դասարանների ուսումնական ծրագրերում մտցվեցին «Խաղողագործություն» և «Դաշտավարություն» առարկաները: Նինա Դակոբյանը, որ եռանդուն, գործունյա, բանմիտց ու բարձրակարգ մասնագետ էր, միաժամանակ վարում էր Մարտունու պրոֆտեխուսումնարանի Սոսի մասնաճյուղի գործող դասընթացները: Նա դասավանդում էր քիմիա և կենսաբանություն: Դպրոցն ուներ հողամաս, որի մի մասն օգտագործվում էր որպես խաղողագի, մյուս մասը՝ պտղատու այգի: Իր գործին անմնացողով նվիրված ուսուցչուհու հետ աշակերտները մեծ սիրով էին աշխատում և շատ էին սիրում բարի, հասնատ ու մայրական քնքշանքով լեցուն կենսաբանության ուսուցչուհուն:

Վաղուց վաստակած հանգստի անցած Մեծ մայրիկ-տատիկը սիրում էր մանկանալ իր ծոռների հետ, հեքիաթներ պատմել նրանց բարու և զեղեցիկի մասին, կրթել նրանց հոգիները մարդկային բարձր արժանիքներով: Սակայն բնության անշեղ ընթացքի առջև արմատավորված հիվանդությունների դեմ անզոր ծերունավարդ Մեծ մայրիկը՝ սիրելի տատիկը, վաստակաշատ ուսուցչուհին, հասարակության հարգարժան անդամը: Սոսի միջնակարգ դպրոցի կուլեկտիվը ցավակցում է ռազմագիտության ուսուցիչ Գագիկ Ավագունյանին սիրելի մոր՝ Նինա Դակոբյանի մահվան կապակցությամբ և հարազատներին ցանկանում համբերություն, ջերմ ու լուսաշող հիշողություններ:

Սոսի միջնակարգ դպրոցի մանկավարժական կուլեկտիվ

խոսք հիշատակի



Մանկավարժ Լյովա Մկրտչյանի մահվան լուրը ցնցեց բոլորին: Սգի մեջ էին Մկրտչյանների գերդաստանը, ողջ գյուղը, նրան ճանաչող բոլոր մարդիկ: Լյովա Միքայելի Մկրտչյանը ծնվել է 1954թ. օգոստոսի 3-ին Ասկերանի շրջանի Աստղաշեն (Դաշբուլաղ) գյուղում: 1961թ. համախել է Դաշբուլաղի ութամյա դպրոցի առաջին դասարանը և այն ավարտելուց հետո ուսումը շարունակել Բաղարայի (Պատարա) միջնակարգ դպրոցում: 1971թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի Մանկավարժություն և մեթոդիկա տարրական ուսուցման հեռակա բաժին, միևնույն ժամանակ աշխատանքի անցել Ստեփանակերտի օդերևութաբանական կայանում:

ԼՅՈՎԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԿՐՏՉՅԱՆ

1976թ. իր պարտքն է կատարել հայրենիքի հանդեպ և ծառայությունից հետո 1979թ. աշխատանքի է անցել Քոսասնու ութամյա դպրոցում՝ որպես դասավար: 1988թ. տեղափոխվել է Խանքեբի դպրոց տնօրենի պաշտոնով: 1999թ. սեպտեմբերին նշանակվել է Աստղաշենի ժամ Անդրյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն: 2010թ. աշխատել է նույն դպրոցում՝ որպես զինղեկ: Լյովա Մկրտչյանը երկար տարիներ աշխատելով տարբեր կուլեկտիվներում՝ ամենուրեք վայելել է մանկավարժների և հասարակության սերն ու հարգանքը: Նա կրթել ու դաստիարակել է բազում սերունդներ, նրանց մեջ սերմանել մարդկային լավագույն հատկանիշներ՝ հայրենասիրություն, անաչառություն, ընկերասիրություն: Անջափ աշխատասեր էր: Սիրում էր զբաղվել նաև գյուղատնտեսական աշխատանքներով: Սիրում էր հողի հետ աշխատել ու հողի հետ խորհել: Գուցե դրանից էր, որ ժամանակից շուտ հանձնվեց հողին՝ իր հավերժությունը գտնելով նրա մեջ: Լ. Մկրտչյանը մեծ հայրենասեր էր: Արցախյան շարժման հենց առաջին օրերին զինվորագրվեց գյուղի մարտական ջոկատին՝ գրիչը փոխարինելով գեներով: Մասնակցել է Արցախի պաշտպանությանը և հաղթանակով վերադարձել իր օջախը:

Բարդ է կյանքը՝ ուրախություններով ու դժվարություններով լի: Բայց նա միշտ հպարտ է քայլել անգամ տատակոտ ճանապարհներով, երբեք չի երկնչել դժվարություններից, միշտ օգնել և հուսադրել է մեծին ու փոքրին, բոլորին կարեկցել ու աջակցել: Լյովա Մկրտչյանը խորագրա անհատականություն էր՝ օժտված բարձր գիտակցական կարգապահությամբ, պարտքի ու պատասխանատվության զգացումով, անձնային բարձր որակներով: Արդարամիտ էր, սկզբունքային, հավատարիմ մանկավարժի վեհ կոչմանը: Իր ասելիքով ու գործելակերպով ամբարել ու ստեղծել էր մանկավարժի գեղեցիկ մի կենսագրություն, որի էջերից սաներին, մարդկանց ու հասարակությանը նայում է որպես լուսավորյալ ջահի կրողը: Դու գնացիր, բայց քո անունը թողեցիր քո թողնելիս և ընդմիշտ քո հարազատների, քեզ ճանաչողների սրտերում կմնաս որպես բարի ու անաչառ, նվիրյալ անձնավորություն:

Աստղաշենի ժամ Անդրյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական և աշակերտական կուլեկտիվներ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

«ԷՂԻՔ ԳՐԻՆՏԸ» ՍՏԵՂԾՈՒՄ Ե ՈՒՍՈՒՅՉԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ



Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում Արցախի պետական համալսարանի հերթական հյուրը Հայաստանի խոշոր հրատարակչություններից «Էդիթ պրինտի» հիմնադիր-տնօրեն, հրատարակիչների միության նախագահ Մկրտիչ Կարապետյանն էր: Նա ուսանողների առջև հանդես եկավ «Նոր տեխնոլոգիաները հրատարակչության մեջ» թեմայով: Բանախոսը նախ որոշ տեղեկություններ հաղորդեց արդեն 26 տարի Հայաստանում հրատարակչական գործունեություն ծավալող «Էդիթ պրինտի» մասին: Քանի որ հրատարակչությունը առաջին հերթին տպագիր գիրքն է, նա խոսեց հայերեն առաջին տպագրիչի՝ Հակոբ Մեղակարտի կողմից տպագրված առաջին գրքի՝ «Ուրբաթագրքի» մասին: Աշխարհում այդ գրքից գոյություն ունի տասը օրինակ, որից երեքը գտնվում է Երևանում: «Էդիթ պրինտը» ստեղծել է դրա լուսապատճենահանված օրինակը:

«Էդիթ պրինտի» առաջին ուղղությունը, որով սկսել է գործունեությունը, դպրոցական գրականությունն է՝ սկսած Այբբենարանից, «Մայրենի»-ներից, «Մատենիկ»-ներից մինչև հեքիաթներ և այլն: Կարևոր տեղ է զբաղեցնում հայ դասական գրողների ստեղծագործությունների տպագրությունը: «Դպրոցական գրական» մատենաշարով հայ դասական 50 գրողի ստեղծագործություններ տպագրվել են: Դրանք բոլորը կան Արցախի դպրոցների գրադարաններում:

«Էդիթ պրինտի» մի կարևոր ուղղությունն էլ թարգմանական գրականությունն է: Մ. Կարապետյանն ասաց, որ համաշխարհային գրողների ստեղծագործությունների թարգմանություններն իրենք կատարում են բնագրից, ի տարբե-

րություն խորհրդային տարիների հրատարակած թարգմանությունների, որը, նախ՝ կատարվում էր ռուսերենից, ապա՝ բնագրի 10-20 տոկոսը դուրս էր թողնվում գրաքննության նկատառումներով: Այսօր արդեն ընթերցողի սեղանին են էքզյուպերիի, Ռենարկի բոլոր ստեղծագործությունների հայերեն տարբերակները: Հրատարակչությունը տարեկան 25-30 անուն գիրք է թարգմանում:

«Էդիթ պրինտի» համար կարևոր ուղղություն է բիզնեսի ու մարդու առաջխաղացման հետ կապված գրքերի հրատարակումը: Այսպես, Սթիվեն Քոլի «Յոթ արդյունավետ սովորություններ» գիրքը, որն աշխարհում վաճառվել է ավելի քան 40 մլն օրինակով, առաջին անգամ թարգմանվել է հայերեն: Ջոն Գրինի գրքերն են թարգմանվել: Այս դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ Գրեգորի Վ. Դիլի «Բրենդի հեղափոխությունը» հայերեն գրքի շնորհանդեսը, որին «Էդիթ պրինտի» հրավերով ներկա էր հեղինակը: Մ. Կարապետյանն ասաց, որ տպագրության համար ընտրում են այնպիսի գրքեր, որոնք կարող են զարգացնել մարդուն և օգուտ բերել երկրի տնտեսությանը:

«Էդիթ պրինտը» ինչ հրատարակում է, ստեղծում է նաև դրանց էլեկտրոնային տարբերակը: Հրատարակիչը հատկապես հայերի համար դա շատ կարևոր է համարում, քանի որ 10 մլն հայից երեք միլիոնն է հայրենիքում, մնացածը սփռված է աշխարհով մեկ, հետևաբար, որպեսզի նրանց էլ հասանելի լինեն հայ գրողների ստեղծագործությունները, դիմում են այդ տարբերակին: Ի դեպ, դասագրքերի մի մասը «Էդիթ պրինտը» հրատարակում է արևմտահայերեն:

Էլեկտրոնային տարբերակի առումով հրատարակիչը նշեց նաև դրա մի քանի տարատեսակներ, ինչպես օրինակ, երգող, խոսող գրքերն են: Մանկագիր Լիպարիտ Սարգսյանը գիրք է գրել երաժշտական 28 գործիքների մասին, դրանց հիման վրա երգեր են ստեղծվել: Այդ գիրքը շատ լավ ընդունվում է, և հրատարակչությունը ստեղծել է նաև դրա ինտերակտիվ տարբերակը: Թունանյանի հեքիաթներն են՝ մուլտիպլիկացոն ֆիլմերի սկավառակով և այլն: Ստեղծել են Այբբենարանի հավելված, ամեն տառի համար կան հանելուկներ, երեխան ինտերակտիվ ձևով մտնում է և դրանք լուծում: «Գրա-

կան ունկնդրում և խոսք»-ը վաղուց է ստեղծվել դպրոցականների համար: Վաղուց նորություն չեն և առօրյա գրքերը: Դրանք հատկապես լավ են ընդունվում այն մարդկանց կողմից, ովքեր երկար ժամանակ են անցկացնում ճանապարհի վրա: Հրատարակչության նոր քայլերից է, երբ կարող են գիրքը ոչ միայն պատվ ձևով լսել, այլև հարցեր տալ նրան և պատասխան ստանալ:

Արդյո՞ք էլեկտրոնային տարբերակը սպառնում է տպագիր գրքին. հարցին Մ. Կարապետյանը պատասխանեց, որ էլեկտրոնային գրքեր վաճառվում են ամբողջ աշխարհում: ԱՄՆ-ում էլեկտրոնային տարբերակով կարդում է ընթերցողների 15 տոկոսը, մնացածը կարդում է սովորական գիրք: Նույնը վերաբերում է Եվրոպային: Այնտեղ էլեկտրոնային ավելի քիչ են կարդում: Երբ այն նոր էր ներդրվում, մարդիկ ավելի շատ էին տուրք տալիս դրան: Հիմա գնում է լրիվ հակառակ պրոցեսը, մարդիկ էլի վերադառնում են սովորական գրքին:

Իսկ այժմ՝ «Էդիթ պրինտի» նոր մասագծի մասին:

Հրատարակչությունում ստեղծվել է school.editprint.am ծրագիրը, որի տարբերակներից մեկը ուսումնական խաղերն են մանկապարտեզի, դպրոցի համար: Դրանք արդեն կան և անընդհատ հարստացվում են:

ՀՀ-ն հիմա նոր սերնդի դասագրքեր է մշակում, որն առայժմ վերաբերում է դպրոցական ծրագրերին, որ հետագայում կլինի նաև համալսարանների համար: Նոր սերնդի դասագիրք ասելով հասկանում ենք հետևյալը: Դասագիրքն ստեղծում են հնարավորինս փոքր ծավալով, որում գրվում է հիմնականը, իսկ այն, ինչ պետք է ուսումնասիրել, արվում է էլեկտրոնային տեսքով: Ամեն տարի դժվար է դասագիրք հրատարակել, բայց էլեկտրոնային տարբերակով այն հնարավոր է անընդհատ հարստացնել: «Էդիթ պրինտը» այժմ աշխատում է ուսուցիչ էլեկտրոնային մեթոդական ձեռնարկների վրա: Ուսուցիչը հնարավորություն ունի անընդհատ զարգանալ ինքնակրթությամբ՝ հետևելով այդ կայքին: Առայժմ հարստացվում է «Պատմություն» առարկայի ուսուցիչ ձեռնարկը: Հաջորդը լինելու է ֆիզիկայինը: Ընդգրկվելու են լաբորատոր փորձերը: Ու այդպես՝ հերթով մյուս

առարկաները: Դա մեծ օգնություն է ուսուցչին: Ունենալով ծրագիրն ու չափորոշիչները՝ նա ինքը կարող է ընտրել թեմային անհրաժեշտ նյութերը և հետաքրքիր մատուցել ու ճիշտ ուղղորդել աշակերտներին:


Հրատարակչությունն այդ նպատակով համագործակցում է ոլորտի լավագույն մասնագետների, ուսուցիչների հետ: Այս պահի դրությամբ աշխատում է Երևանի 15 դպրոցների հետ, վերապատրաստում ուսուցիչներին: Ցանկացողները թեմայի վերաբերյալ կարող են իրենց առաջարկություններն ուղարկել կայքին, հրատակչությունում լավագույն մասնագետներից ստեղծված հանձնաժողովը կընտրի անհրաժեշտը: Մ. Կարապետյանն ասաց, որ Արցախի ուսուցիչներն էլ կարող են միանալ կամ էլ հարկ եղած դեպքում իրենք կարող են այստեղ նրանց հետ հանդիպել: Ավելորդ չհամարենք ասել, որ այս բոլոր աշխատանքները կատարվում են հրատարակչության հաշվին:

Էլեկտրոնային դասագրքերը շատ ձեռնտու են հատկապես ուսանողներին, որտեղ տեղադրվում են նաև թեմային վերաբերող օտար լեզուներով նյութեր: Հնարավոր է դրանք կարծ ժամանակում թարգմանել և տպագիր գրքով ներկայացնել բոլոր կուրսերի համար: Իսկ ահա էլեկտրոնային տարբերակով ուսանողին կարող են հասու լինել ոլորտի վերաբերյալ համաշխարհային նորությունները:

«Լուրջ հրատարակչությունները գիտակրթական հիմնարկներ են և մշտապես արծագանքում են նորագույն տեխնոլոգիաներին: Գիտական առաջընթացը և դպրոցի հնարավորությունները չեն համապատասխանում իրար, մեր կրթությունը դրա հետևից չի հասնում: Ինչ որ ստեղծվում է, պետք է մտնի դպրոց», - ասաց Մ. Կարապետյանը: Դրանում իր նպաստն է բերում «Էդիթ պրինտը»: Ի դեպ, Արցախում առաջին համակարգչային դասարանը ստեղծվել է 1988թ. Ասկերանի միջնակարգ դպրոցում Մկրտիչ Կարապետյանի կողմից այն դեպքում, երբ այն Հայաստանում դեռ չկար:

Վերջում տեղեկացնենք, որ եկող տարվա փետրվարի 19-ին՝ Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրը, Արցախում կկազմակերպվի գրքի մեծ ցուցահանդես, որին կմասնակցեն Հայաստանի մի շարք հրատարակչություններ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ



Արցախի մանկավարժի գրադարանը համալրվեց ևս մեկ ուսումնամեթոդական ձեռնարկով: Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի (ԳՆՀ) գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվել է «Գրական ստեղծագործության ուսուցման և որակի բարձրացման մի քանի հարցեր» ձեռնարկ՝ բանասիրա-

կան գիտությունների թեկնածու Ամալյա Գրիգորյանի հեղինակությամբ: «Գրիգոր Նարեկացի» համալսարանում, որի գիտական և որակի ապահովման կենտրոնների տնօրենն է հեղինակը, տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը:

Բացման իր խոսքում ԳՆՀ ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը նշեց, որ ուսումնամեթոդական այս ձեռնարկը արդիական է առաջին հերթին իր արծարծած խնդիրներով: Դպրոցներում անցկացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա հեղինակը գրականության ուսուցմանն առնչվող մի շարք հարցեր է բարձրացրել. ուսուցման մեթոդի ընտրություն, ներառարկայական և միջառարկայական կապերի կարևորություն, գրական երկերի ուսուցման հիմնախնդիրներ, բուհ-դպրոց կապ և այլն:

Ռեկտորի խոսքով՝ գրքի հրատարակությունը առաջընթացի մի կարևոր քայլ է նաև ԳՆՀ-ի

համար: Ինչպես հայտնի է, Արցախում գործող բուհերը հավատարմագրման գործընթացում են, և վերջնաժամկետ է մշակված մինչև ընթացիկ դեկտեմբերի վերջը: Հավատարմագրման չափանիշներից մեկն էլ համալսարանի դասախոսների հրատարակած գիտական աշխատանքներն են:

Միջոցառմանը Ամալյա Գրիգորյանին շնորհավորելու առիթները մի քանիսն էին: Հիշյալ գրքի համար նրան ԲՈԿ-ի կողմից շնորհվել է դոցենտի կոչում, իսկ ԳՆՀ հանձնաժողովն արժանացրել է համալսարանի «Տարվա լավագույն գիտական աշխատանք» մրցանակին:

Շնորհանդեսին ելույթ ունեցավ գրքի գրախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Էլադա Բաղդասարյանը, որը նշեց, որ կրթության բարեփոխումների ոլորապատույտում առաջավոր ուսուցիչների փորձը վեր հանելը այդ բարեփոխումները կյանքի կոչելու քայլերից է:

Միջոցառմանը ներկա էր Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Թերեզա Կարախանյանը: Նա ասաց, որ հեղինակը շնորհակալ գործ է կատարել՝ մասնակցելով մանկավարժական փորձուսուցումներին և ի մի բերելով մայրաքաղաքի ուսուցիչների առաջավոր փորձը: Ուսուցիչները կարիք ունեն նման ձեռնարկի:

Վերջին տարիներս գրականագիտության ասպարեզում ակտիվ հետազոտություններ կատարող Ա.Գրիգորյանի կարծիքով՝ բարեփոխվող դպրոցում առավել հրատապ են դառնում գրականության դասավանդման մեթոդական և ուսուցողական հարցերի նոր մշակման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

«Գրականության դասավանդման մեթոդական մանկավարժական գիտության մի ճյուղն է: Ուսուցման բարձր արդյունավետության կարելի է

հասնել հատկապես գրականության դասերին, քանի որ ոչ մի առարկա այնպես չի նպաստում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ու կատարելագործմանը, ինչպես գրականությունը»,- համոզված է հեղինակը:

Ձեռնարկում ուսուցիչների փորձի վերլուծության միջոցով լուսաբանվում են գրականության դասի ժամանակ ներառարկայական, միջառարկայական, ուղիղ և հետադարձ կապերի դասավանդման լավագույն տարբերակի ընտրության ապահովման հետ կապված հիմնահարցերը:

Շնորհանդեսին բոլոր ելույթ ունեցողները՝ դասախոսներն ու հրավիրվածները, կարևորեցին ձեռնարկի դերը կրթական համակարգում որպես օգնություն մանկավարժական փորձուսուցմանը մասնակցող ուսանողներին, սկսնակ ուսուցիչներին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ

Արցախը երկիր է, որտեղ սիրում են սպորտը, եւ ծնվում են չեմպիոններ: Արցախցիները սպորտային են ինչպես պրոֆեսիոնալ մարզիկների հաջողությունների, այնպես էլ սպորտի մասսայականացված լինելու շնորհիվ: Տարբեր մարզածեերում մեր մազիկները հասել են այնքան տպավորիչ արդյունքների, որ նրանց մեծահմուտ վարպետությունը բարձր է թվում մարզկային հնարավորություններից: Ամենամահավատալի արդյունքների հասած մարզիկներն ուղեցույց եւ օրինակ են ինչպես իրենց հասակակիցների, այնպես էլ շարունակող սերունդների համար:



Սամբոն Արցախում ամենատարածված մարզածեերից է, որը շարունակում է ակտիվ զարգանալ: Միջազգային օլիմպիական կոմիտեի որոշմամբ այն մտցված էր սպորտի օլիմպիական ծեւերի մեջ: Սամբոյի երկու տեսակ կա՝ մարտական եւ սպորտային: Սպորտային սամբոն մենամարտի տեսակ է, որտեղ հիմնականում օգտագործվում են մարտական կեցվածքում եւ գետնին կիրառվող՝ մեծ պաշարով ցավեցնող հնարներ, մետուներ: Սամբիստը պետք է գերազանց տիրապետի ինչպես ինքնապաշտպանության համար լավագույն միջոց հանդիսացող սամբոյի տեխնիկական համակարգին, այնպես էլ՝ լինի հաղթական ոգով եւ կարգապահ: Այս հատկությունները մեր համերկրացի սամբիստ **Դավիթ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ** բնավորության մասն են կազմում:

Քվականների բրոնզե մեդալակիր է: 2019թ. 2-րդ Եվրոպական խաղերի արծաթե մեդալակիր է: 2019թ. նոյեմբերի 7-10-ը Հարավային Կորեայի Չոնջիու քաղաքում կայացած Սպորտային սամբոյի աշխարհի առաջնությունից Դավիթ Գրիգորյանը բրոնզե մեդալ բերեց: Առաջնությանը մասնակցում էին աշխարհի ուժեղագույն մարզիկները: ՀՀ 11 հոգանոց հավաքականի կազմում 82կգ քաշային կարգում հանդես եկած Դավիթ Գրիգորյանը միակն է, որ կարողացավ մրցանակային տեղ զբաղեցնել աշխարհի առաջնությունում:



Մ Ի խ ա յ Ի Լ ՄԻՍԻԹՐԱՅԱՆԸ ծնվել է 1999թ. մարտի 1-ին Մուսկվայում: Տեղափոխվել է Արցախ եւ չորս տարեկանից սկսել պարապել կարատե մարզածեուով: Տասնվեց տարի այդ գործի մեջ է, իսկ արդյունքը՝ ավելի քան գոհացուցիչ: Բարձրունքի հասնելու ճանապարհին նրան ուղեկցել են առաջին մարզիչ՝ Արցախի ավանդական կարատե դո ֆեդերացիայի նախագահ եւ գլխավոր մարզիչ, սեւ գոտի 4-րդ դաս Արամ Գեւորգյանը, գունավոր գոտիները շնորհել է սեւ գոտի 8-րդ դաս ՀՀ ֆուդոկան կարատեի ֆեդերացիայի նախագահ եւ նրա մարզիչ Կարեն Ավետիսյանը: Միխայիլ Միսիթրայանը եւ Արամ Գեւորգյանը այսօր 2-րդ դաս սեւ գոտու տեր է: Նրա մարզիչներն են նաեւ ֆուդոկան կարատեի ՀՀ հավաքականի մարզիչ Արթուր Օհանյանը, մարզիչ Հունան Ավետիսյանը, ինչպես նաեւ իր հայրն ու անձնական մարզիչը՝ Աշոտ Միսիթրայանը: Միխայիլը դասեր է քաղում նաեւ իր ավագ հրահանգիչներ՝ Եվրոպայի եւ աշխարհի բազմակի չեմպիոն իտալացի Լուկա Վալդեզից եւ Իտալիայի օլիմպիական կարատեի հավաքականի մարզիչ Վինչենցո Ֆիգուչչիոյից: ՀՀ կարատեի ազգային ֆեդերացիայի եւ Արցախի կարատե դո ֆեդերացիայի մարզիկ Միխայիլ Միսիթրայանը Եվրոպայի գործող չեմպիոն է (2018թ. դեկտեմբերի 6-9-ը Սլովենիայի Պորտորոք քաղաքում կայացած ֆոդոկան կարատե դո-ի Եվրոպայի 24-րդ առաջնության), իսկ 2019թ. սպորտային ֆուդոկան կարատեի՝ աշխարհի գործող չեմպիոն: 2019թ. նոյեմբերի 2-ին Գերմանիայում կայացած Սպորտային ֆուդոկան կարատեի աշխարհի առաջնությունում կատա մրցածելի 18-20 կգ քաշային կարգում հաղթելով Իտալիան, Հունգարիան, Չեխիան եւ Գերմանիան ներկայացնող մրցակիցներին՝ արժանացել է ոսկե մեդալի եւ հռչակվել աշխարհի չեմպիոն: Մ.Միսիթրայանի խոսքով՝ նրա մրցակիցները հզոր էին, իսկ գերմանացի մրցակցի երկրպագուների ճնշումը շատ ուժեղ էր, սակայն արցախցի մարզիկին օգնեց հայի հաղթական ոգին, ու նա կարողացավ հաղթել:



Արթուր Առուշանյանի կողմից: Դեկտեմբերի 7-8-ը Ղազախստանում՝ Նուր-Սուլթանում կայացած Կիոկուշին կարատեի աշխարհի 4-րդ KVVU առաջնությունում 60 կգ քաշային կարգում հաղթելով թուրք, ղազախ եւ վրացի մրցակիցներին՝ Ա. Առուշանյանը դարձավ աշխարհի չեմպիոն: Այսպիսով, Արթուր Առուշանյանը մարզաշխարհի պատմության մեջ դարձավ աշխարհի եռակի չեմպիոնի աննախադեպ տիտղոսակիրը: Արթուրն աշխարհի առաջնությանը ներկայացել էր ՀՀ հավաքականի երեք հոգանոց կազմում, ՀՀ կիոկուշինայ կարատեի ազգային ֆեդերացիայի նախագահ եւ հավաքականի մարզիչ Սպարտակ Գասպարյանի գլխավորությամբ: Հաղթանակից անմիջապես հետո մեզ հետ կայացած օնլայն հարցազրույցում Սպարտակ Գասպարյանն ավելի քան գոհ էր առաջնության արդյունքից: Իսկապես մեր հայրենակից մարզիկը չունի իրեն հավասարը աշխարհում:

Հաղթանակ կերտող մարզաշխարհի մեր հերոսներին մաղթում ենք քաջառողջություն, ուժ եւ եռանդ: Թող մարտերն արժանագրվեն միայն ռիզուս, իսկ մենք հպարտանալու առիթ ունենանք նրանց շարունակական հաղթանակներով:

Սուլյա ԱՎԱԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱԶԻ ՀԱՅՐԱՊԱՏՈՒՄ ԱՆՏԻՊ ԷԶԵՐԻ՝ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՅՎԵԼԸ

ուներ, որ պահանջում են լուրջան, դադարի պահպանում, ինքնաբացահայտման մարտահամակարգերն ի մի բերելու, անսպասելի ընկալելու, ասելիքն արտահայտիչ դարձնելու գեղագիտական միջոց: Ահա դրանցից մի շարք՝ «Թինդոլ էլան... սրտիս մեջ, Ինձ քաշում է... ավերված // Մեր բոստանը փշազեղ, այս ամենը... գող Աստված,- // Ոչ մի Աստուծո ցավս չասե... արնախում, էլ կիսովի չցանցեք... մերը ցանցեք այն ավին (Անի, Կարս), լուսինը ո՞ւմ վախից թուխտերի մեջ էր... թաքցում, - էլ ե՞րբ... հեյ վա՛խ // Արծվի գորբը ետ քաշվեց... որ բծեց ցիւր մեզ, ման մի... ծխախոտի, հետն էլ... ոսոխի // դեռ չէր թվում մի... գնչու, ինձ գրկեց, հեկեկալով... հովաքավ, Հայրս բռնել... լցրել էր գոգն ու ծոցը խնձորով, // (Լուսինը) Թաքնվելով կես ամպում՝ թվալով հեզ... Գրուհի, Ես էլ տեսա տնկելը և ծաղկունը... հորաշքի, // Մեկ էլ... ուսումն իր ձագի և այլն: Մերձ կամ նույն տողում հազվադեպ է կիրառվել՝ «Ախ, կուզեի մանկանալ, մեկ էլ հեծնել... իշուկիս, // Մոռանալով դավերն էլ այս աշխարհի... անառակ, // Չարթուն էր... և անմիտ իմ երագից... ամաչում»:

Երբ ինձ կանայք կվառեն՝ հորս խոսքն են ես հիշում, Հորս շշուկն են լսում, երբ դրժում են ինձ կանայք. - Կինը թե սուրբ *Աստղիկ* չէ՛՝ *աստղ* էլ կանե ոտնատակ, Լուսավորչի կանթեղ է՛ թե *աստղիկ* է մշուշում: Ավա՛ղ, հիմի վխտում են օտարուհիք ամեն տեղ, Մի հայուհի հարս կուզեմ, որ վարդ բանա մեր ճամփին՝ Հարսն էլ գոռար թե՛ «Չարը դեռ ի՞նչ ունի մեր ճամփին՝ Չվերն ինչո՞ւ է դնում կկու թուրքը դեռ այնտեղ...»: Թե չէ՛՝ այս նեղ ի՞նչ պտղե՛ վշտիս կալով բորժելով,- Պառկեմ ավին՝ ոտքերս Արփաչայից դուրս կընկնեմ, Մինչ գայլերն իմ հողում հիմի վագրեր կցնկնեն, - Մաճկալներիս ճերմակած ոսկորները կծեղվի... Եվ հողաքաղց հայրիկս ինքն ազգն էր ինձ թվում, Հեծնված բախի՛մ՝ երբ նայեր հեռուներիս մասիսված, - Մինչև յոթը չծնենք՝ շատ կմնանք դեռ կիսված... Գայ չէ՛ ով դեռ իր մեղքը յոթը որդով չի քավում: Հիրազյան հայրապաշտական գեղագիտական աշխարհում հնչյունների կրկնաբերությունը մեղմ է ու բարեհունց: Այն չափավոր է, միտումնային՝ գեղագիտական ասքին համապատասխան ու լեցուն վարպետ նորահասատուններով: Առձայնությո՞ւն (պիտերացիա) հնչել չի տարբերակվում (խոսքի բարեհնչունությունն է հիմնականում ապահովում), իսկ բարձրաձայնությո՞ւն (ասունան) հնչել է որևէ տարբերակիչ հատկանիշով և սակավ: Օրինակ՝ շ-երի կրկնաբերությունը: Այդպիսի ծուլվածքը գոյավորվում է տարբեր դիրքերում, ինչպես՝ *տողային*. Դեռ շրշում են, շշուկում հուշերս՝ հազար հուշարար, Օշարակվեր սառույցն էլ՝ աշխարհի շորթող շորթորին, Եվ հուշերիս մշուշում ոսկե աշուն են հիշում, *երկտող*՝ Աշուն դեղին շշուկով, սև հուշերով կիշշան՝// Ա՛խ, թե ինչպես գիշերով, կույր աչքի տակ լուսնյակի, Ինչ փուշ, անուշ իմ հուշեր, // Հայրս՝ ուրիշ մի նշխար և այլն (տողում երկու այդ տիպի բառի կիրառությունը ավելին է՝ աշուն ոսկին է իշշում և այլն): Հովհաննես Շիրազի «Հուշարձան հայրիկիս» գրքի մտային գեղագիտական նորահասատունները հնչել են նաև նորակազմությունների կառուցումում (այստեղ, համեմատած «Անտիպ էջեր» Ա պրակի հետ, թվային քանակով որանք համեմատաբար քիչ են): Ընդգծվում են հատկապես տարբերային հատկանիշներ արտահայտելու պահանջից ձևավորվածները, որոնք նաև աստիճանավորում են ստեղծում: *Նորահայր՝ նոր հայր դարձած տղամարդ* հասկացությունը, որը նոր ծնող դարձողի հոգու անթարթանելի հրճվածքն է, կարողանում է խտացված մտածողությամբ արտահայտությամբ ձևակերպել գեղագիտական հաճելի նկարագրություններ, որը չափածոյի առաջադիմական հատկանիշներից է.

Որ մեկին յոթը պտղեր մեր բոստանը թավազեղ: Հեղինակը մանկական մտածողությամբ բանջարանոցում միայնակ գիշեր ու զօր վարձու աշխատող հոր աշխատատեղին մեր *բանջարանոց* էր բնութագրել: Դա անվերծանելի զգացումների պարզունակ ու տարածված արտահայտություն է (հոր եղած տեղերը զավակին սեփական են թվում): Այդ տիպի իմաստաբանական նորաբանություն է *կարավել* բառի գուրգորումը *առվին*: Այն վետվետալով, ներծծվելով առաջ է շարժվում. կարճընթաց իրարահաջորդումներն ապշեցնում են գեղագիտական բանաձևումով՝ առուն է մեղմ *կարավում*: Թվում է՝ աստվածային այս պատկերը մեծարժեք գոհար է իր պարզությամբ: Սուր դիտողունակությամբ օժտված բանաստեղծը նույն տեղում *համբուրել՝ շվիվել* իմաստով բառը համադրել է գեղագիտական մի այլ պարզունակի, և կառույցն այդ պահի կենսածն է դարձել՝ *Համբուրելով* հայրիկիս ոտքերը՝ առուն կվազե: Սովորական թվացող բանաբանությամբ *բաղանակվել՝ ոչնչացվել* իմաստով բառը ներքին պարունակով թափանցած ժայթքում է: Մեր հասարակության ներկայացուցիչների՝ մարդկայնորեն ոչ համակարգված լինելն է մեղմաբարո ներկայացվում՝ մոլախոտված այս կյանքն էլ *եղենաբեր* քաղհանվի, *եղենաբեր* բառը նորակազմություն է): *Գավաթ* բառը հեղինակային մեկնաբանությամբ է վանա ծով իմաստը ձեռք բերել՝ *Գավաթս պիտի որդուս կտակեմ, // Վաղվա գավաթս, որ ծով է վանա: Իմաստաբանական նորաբանություն է խորասիրտը (չենք, 16, սովորական փոխաբերականը՝ դարձվածային ուղղակի իմաստով է կիրառված, բարձրահարկ շենքերն են նոր գեղագիտական մոտեցմամբ հատկանշվել, բանաստեղծականացվել):*

Ժողովրդական իմաստուն կայուն բառակապակցություններով (դարձված, շրջատույթ) առատ է շիրազյան գեղագիտական խոսքը, որտեղ էլի գոյավորվում է հայրական անգուգական պաշտամունքը, ինչպես՝ *հոր պատիվը, հոր գինը, հոր սրտին վերք, խեղճ զան, գայլապաշտ այրեր, կնոջ կինը դառնալ, քար սրտեր, մեղքի ծովը քավել, նոր կյանք, գարթոնքի դար, ծաղկունքի քուն, կանաչ-կանաչ մեղցվել, նորադուր թուխ բեղ* (երիտասարդ), *թմիրների ծուխ, կանաչ կիրակի, ոսկե գոտի կապել, վշտի գետ* և այլն: Այդ տիպի հոյեղ բանաստեղծություն է «Գետը թե ծով չծնի» ավանդական խոսքով առեցուն գործը, որտեղ *օտար կացնի հայ պոչ* (կոթ) հեղինակային մշակմամբ մեր ժողովրդի դարավոր ցավի ու մեծ վնասի անբողոքյան ողբերգությունն է հուշում, հասարակ աշխատավոր, բայց հայրենասեր հայրերի մտածումներն է շեշտում (շիրազյան մշտական ոգորումներ).

Մեզ մաշեցին անդադար, որ մեզ տիրեն, Գալոցն ով էլ մեզ տիրե՛ պիտի մաշե անդադար, Հեշտ է մի ծառ կտրե՛լը, թե՛ սար ծածկող մի անտառ,- Օտար կացնի հայ պոչերն անտառն իրենք կկտրեն... Էլ ե՞րբ մեր ծառն անտառով,- հառաչում էր հայրիկս, Արծվի մի թևն է խելքը, մյուսը՝ թիվն է, թիվն է բազկի,- Մեկուճարով կարծվանա՛՝ լորն ամուլվող մեր ազգին,-

Լսում՝ գլուխն էր կախում՝ լուռ շիկնելով մայրիկիս... «Ազգի մահն ես, ապահարզան...» բանաստեղծությունում նորահասատուններով փնտրվում է մեր ազգի ոչ կանոնավոր աճը, ընտանիքների անհամաձայնությունները, անխտեն գծողությունները: Շեշտում է տուրք մոր ավանդականը, հավերժացնում նրա մնայուն երկնային հոգեթով սերը և մոր անվամբ ստեղծում նույնանուն՝ անհասանելի սրբություն աստղերի հետ (նորակազմություններ են՝ *հողաքաղց, մասիսվել*).

Մանուկ աչքիս հայրիկս ծերուկ հսկա էր թվում (Այնինչ՝ այր էր *Նորահայր*, միջախասակ, բայց թիկնեղ), Ամեն մատը մի ձեռք էր, երբ հողի դեմ էր կռվում,

Սիլվա ՄԻՆԱՍՅԱՆ
Բ. Գ. Թ., դոցենտ

ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

ԱՅՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՎԱՅՐԵՐ

ԿԱՏԱՐՈՒ, ԿԱՏԱՐՅԱԼ...

Արցախը հարուստ է մշակութային և հոգևոր գանձերով: Եվ ամեն անգամ որևէ սրբավայր կամ հնություն հայտնաբերելիս զարմանում են հայի ճաշակի, բանիմացության, կամքի ուժի, վարպետության, հավատի վրա:



Եթե կրվում վերցրել է գեներ, ապա ժամանակավոր զինադադարի ժամանակ գրչով կամ բրդիչով, մատյանով կամ վանքով ներկայացել է աշխարհին:

Այսօր ամբողջ աշխարհին Արցախի Հանրապետությունը ներկայանում է հենց այդ մնայուն արժեքներով: Ուսումնասիրելով Դիզափայտի կամ Կատարի վանքի պատմությունը, պատմական սկզբնաղբյուրները և լսելով ուխտագնացության դժվարին ճանապարհի մասին՝ որոշեցինք XII դասարանի դասուհի Ա. Հարությունյանի նախաձեռնությամբ փորձել մեր հավատքի ուժը և Արցախի աշխարհի խաղաղության և հարատևության համար սրտի խորքից խոսք հղել ամ Աստված: Ավելի հարմար պահ, քան աշնանային պայծառ այդ օրը՝ չէինք կարող պատկերացնել արշավի համար:

Աշնան գույները և մեր տրամադրությունները միախառնվեցին իրար, և հենց առավոտյան էլ ճանփա ընկանք: Եղանակը, սակայն, փոփոխական էր: Բնությունը կարծես մի գաղտնի խաղ էր սկսել մեզ հետ. գտիր՝ թե կարող ես: Վերելքը դժվար էր, և հաղթահարելն առանց հավատքի՝ անհնար:

Ձարմանալի տոկունություն և կամքի ուժ

ցուցաբերեցին XII դասարանի մեր աշակերտները, որոնք ապացուցեցին, որ իրենց հավատքն ավելի զորեղ է, որ արժանի հետնորդներն են այն սուրբ նահատակների, ովքեր հավիտենական կյանքի համար տվեցին իրենց ժամանակավոր կյանքը:

Ուրախալի էր և ոգևորող աշակերտների նման պահվածքը, որոնց իր ներկայությամբ քաջալերում և առաջնորդում, հետաքրքրող հարցերին պատասխանում էր դպրոցի տնօրեն Յ. Հարությունյանը:

Կարծես քանի բարձրանում, այնքան մոտենում էինք Աստծուն: Ամեն մի նոր բարձունքի հաղթահարումը ասես հոգիդ մաքրում, պատրաստում էր Ամուսանելիի հետ հանդիպման: Կատարի վանք՝ ասել է թե մոտենալ Կատարյալին, կատարել անհնարինը, բարձրանալ Արցախի կատարների կատարը:

Մեր իմաստուն հայերը վանքը բարձունքի վրա կառուցելով՝ ապրողներին իմաստուն դասեր են սովորեցրել, դասեր, որոնք ոչ մի տեղ չենք կարող սովորել, եթե ոչ այդ ուխտի ճանապարհին:

Մարդը հոգևոր է և եթե հոգով ուժեղ է, կարող է հաղթահարել կյանքի բոլոր դժվարություններն ու խոչընդոտները:

Վերջապես հասանք սրբազան վայրը: Փոքրիկ մատուռն իր ցնցող աշխարհագրական դիրքով, ուխտավորների կողմից թողնված բազմաթիվ խաչքարերով և սրբանկարներով այնքան հյուրընկալ էր, այնքան հարազատ, որ մոռացանք բոլոր դժվարություններն ու հոգևածությունը: Օրինություն էր կաթուն մատուռի ամեն անկյունից, ամեն քարից ու խորշից: Անբացատրելի էր զգացողությունը, իսկ աստվածային խաղաղությունը՝ անզնահատելի:

Ճաշակելով Աստուծո տված հոգևոր բարիքները՝ չէինք ուզում բաժանվել, դժվարությամբ ձեռք բերված թողնել հեծվում, բաժանվել իրականացած երազանքից: Այդ պահին բարձունքը մերն էր, իսկ մատուռը՝ հարազատ վայր:

Աշնանային արևը կամաց-կամաց զիջում էր իր տեղը և մեզ հիշեցնում վայրէջքի մասին: Տպավորված՝ բռնեցինք դարձի ճանապարհը՝ համոզված, որ վանքում մեր շշուկները հասան Կատարյալին:

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ուսուցչի առաքելությունը ոչ միայն գիտելիքներ մատուցելն է, այլև բնության և կյանքի օրենքները հասկանալը, դրանք աշակերտներին ճշմարիտ պատկերացումներով ներկայացնելը: Դրա համար ուսուցիչը, աշխատելով իր գիտական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, միշտ պիտի կապված լինի բնությանը, մշակութային մշակավոր անցքերին, հասարակական իրադարձություններին, հայրենիքի պատմական վայրերին ու սրբավայրերին:

Նման մտածելակերպով է տարիներ շարունակ առաջնորդվում Հռչի Սարգիս Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն, 40 տարվա մանկավարժ Համլետ Հարությունյանը, որն օգտագործելով առիթները՝ նպատակաշին է համարում ուսուցչական կոլեկտիվի հանգիստը կազմակերպել հայրենիքի տեսարժան վայրերում՝ գերադասելով գեղագիտական հաճույքը և բնության համզվածքը:

Այս անգամ ընտրված վայրը պատմական Սյունիքն էր: Անշուշտ, բնությունը և մարդը ան-



բակելի կապերով են կապված իրար: Աշնանային հրաշք բնությունը, մաքուր օդը, խորհրդավոր լուսությունը մի կատարյալ ներդաշնակություն են առաջացնում, և ուզում ես վայելել ու վայելել... Միայն հայի ուղեղում կարող է ծնվել նման միտք՝ ստեղծել օդում այնպիսի հրաշք մի կառույց, հինչպիսին է Շոնիոլ կամուրջը, որը գտնվում է Հին Հանձորեսկի հարևանությամբ: Կանգնած երկնքի և երկրի միջև՝ մի պահ կտրվում են այս կյանքից, զգում քեզ բարձունքներում՝ հեռու կյանքի դժվարություններից ու փորձություններից...

Այն զգացողությունն էր, որ իրոք յոթերորդ երկնքում ես... Այո, Սյունիքի բնությունը յուրահատուկ է իր գույներով, կառույցներով, ժողովրդով: Ինչքան էլ մեր ժողովուրդը ձգտել է դեպի վեր՝ դեպի բարձունքներ, բարձր արժանիքներ, միևնույն է, կապված ենք հողին, ավելի ճիշտ՝ մեր անցյալին ու մեծերին:

Կամրջի հարևանությամբ գտնվող՝ Մխիթար Սպարապետի գերեզմանը նոր խոհեր ու զգացմունքներ է առաջացնում հոգուդ մեջ:

Մարդը ի ծնե մահկանացու է, անմշան էակ երկրի վրա: Բայց նա կարող է իր փոքրությամբ անգամ կերտել մի ողջ ժողովրդի ապագա կամ կարևոր դեր խաղալ այդ գործում իր անմահոհությամբ ու քաջությամբ:

Փառք մեր հերոս նախնիներին, որոնք դարձան մեր ժողովրդի, մեր պետության ամուր հիմքը և վառ օրինակ՝ մեր այսօրվա սերնդի համար: Բարձրանում ենք փայտե սանդուղքներով և հիշում նորօրյա մեր հերոսներին՝ Մոնթե, Բեկոր, Դուշան Կարդան... Ինչ զարմանալի և յուրահատուկ ազգ ենք մենք...

Հին է հայոց աշխարհը, նրա քարը, սարը, վանքը: Եվ գյուղը, ուր այցելեցինք, առանձնանում է նրանով, որ բաժանվում է հնի և նորի:

Նոր հանձորեսկում արևի տակ փայլում են բարեկարգ նոր տները, իսկ Հին Հանձորեսկում՝ միայն հին եկեղեցիներ: Ստեղծված է ակնհայտ կապ նորի և հնի, մարմնի և հոգու, աշխարհիկի և երկնայինի միջև: Ամենախորընկալ տունը՝ Աստուծո տունը, միշտ սիրով սպասում է և ընդունում բոլորին՝ հոգիդ լցնելով հավատով, սիրով ու երանավետ խաղաղությամբ: Սուրբ Հռիփսիմեն եկեղեցու բազմաթիվ սրբապատկերները, հավատացյալների աղոթքներից ջերմացած պատերը և աչքի համար անտեսանելի, բայց զգալի աներևույթ գուրությունը պարզապես են քեզ ամեն մտքից վեր անպատկերելի զգացողություններ: Նորից ու նորից համոզվում ես, որ Աստուծո գործերն անքննելի են, Նրա սերը՝ մեծ ու անսահման: Եվ այդ սերն է ստիպում ապրել ու նվիրվել մարդկանց և աշխատանքին:

Տեսածի ու զգացածի աննկարագրելի տպավորություններով շարունակվում ենք մեր ճանապարհը դեպի Շաբի ջրվեժ, որը մեր վերջին կանգառն էր: Հիացանք ջրվեժի գեղեցկությամբ, վայելեցինք ջրի մեղեդին և ցայտերը: Հագեցած օր էր...

Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Հռչի Սարգիս Աբրահամյանի անվան միջն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Խոսք հիշատակի

ՀՐԱՉԻԿ ՎԱՉԱԳԱՆԻ ԱՐՉԱՆՅԱՆ



ծին:

Կան մարդկային կերպարներ, որոնք առաջին հայացքից թվում են սովորական, բայց փորձեք թերթել նրանց կյանքի լեզուն, և նրանք ձեր առջև կհանունեն որպես կյանքի ուղեցույց: Դժվար է սահմանափակ տողերով խոսել մի մարդու մասին, ով ունի հոգու անսահման խորություն: Հարուստ հոգեկանը մարդուն տանում է դեպի վեր, կատարյալը, աստվածայինը: Եվ նա այդպիսին էր թե՛ ընտանիքում, թե՛ շրջապատում:

Գնաց, այր... ասուպվեց մեր հիշողության մեջ ու զնաց միանալու հավերժությանը, իր արմատներին, մանկավարժ գործընկերներին, մանկավարժ ծնողներին: Բայց մի՞թե ուսուցիչը մահանում է: Երբեք, միշտ կա ու կլինի, քանզի կան նրա կրթած ու դաստիարակած սերունդները:

Ծանր հիվանդությունից հետո կյանքի 66-րդ տարում Հրաչիկ Արզանյանը՝ մեր սիրելի, հարգարժան ուսուցիչն ու բարի խորհրդատու գործընկերն անցավ երկրային կյանքի սահմանագիծը՝ թողնելով հարուստ ժառանգություն:

Ծանր ու անդառնալի կորուստ կրեցին Ավետարանոցի միջնակարգ դպրոցը, գյուղի հասարակությունը: Մանկավարժների աստուղաբույլից պոկվեց ու ցած ընկավ և մի լուսավոր աստղ: Հ. Արզանյանը իրեն անմահացրող նվիրաբերել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության սուրբ գործին՝ հավատարիմ մնալով գյուղին ու գյուղական կյանքին:

Ծնվել է 1953թ. օգոստոսի 20-ին Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղում՝ մանկավարժի ընտանիքում: Գյուղի միջնակարգ դպրոցը գերազանց գնահատականներով ավարտելուց հետո ընդունվել է Գորիսի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը՝ նույնպես գերազանց ավարտելով 1974թ.: Այնուհետև դասախոսական կազմի առաջարկով աշխատանքի է անցել ինստիտուտում՝ որպես կրտսեր դասախոս: Երկու տարի դասախոսելուց հետո ծառայության է անցել խորհրդային բանակի շարքերում:

Հայրենի եզերքի կանչով 1976թ. վերադարձել է գյուղ և աշխատանքի անցել նույն գյուղի դպրոցում՝

որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Չբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ գյուղական խորհրդի նախագահ, դպրոցի տնօրեն: Ամուսնացել է հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նվարդ Բաղդյանի հետ ու կազմել օրինակելի ընտանիք: Ունեն չորս հրաշալի զավակներ՝ Պարույրը, Լուսինեն, Համեստը և Վրույրը: Բոլորն էլ աշխատում են տարբեր հաստատություններում, զբաղեցնում տարբեր պաշտոններ, վայելում հասարակության սերն ու հարգանքը:

Ընկեր Արզանյանը միշտ էլ բարձր է պահել մանկավարժի կոչումը, գերադասել է միշտ լինել շարքային ուսուցիչ, որն էլ ազգանվեր սուրբ առաքելություն է, որ տրվում է մարդուն այդ մասնագիտությունն ընտրելու պահից: Առանց այդ առաքյալների հնարավոր չէ տոնել մատաղ սերնդի համակողմանի դաստիարակության ազգապահպան գործի հաղթանակը:

Արցախյան ազատամարտի ոգեշնչողներից էր, հայրենասեր, ազգապաշտ, պատերազմական ծանր տարիներին մանկավարժա-

կան գործունեությանը զուգընթաց ղեկավարում էր գյուղը: Բարի, մաքուր սիրտ ուներ, խորը կսկիծ էր ապրում՝ տեսնելով յուրաքանչյուր ազատամարտիկի կորուստ: Պարզասրտությամբ է «Արիության համար», «Երախտագիտություն» մեղավերով և բազում պատվոգրերով: Ընկեր Արզանյանը հոգատար անուսին էր, հոգատար հայր:

Ընկեր Արզանյանը մեծ բանաստեղծ Բայրոնի նման կարող էր ասել. «Մեռնեմ էլ՝ ցավ չէ, հերթափոխ ունեն թողած»:

Ընկեր Արզանյանի վառ հիշատակը դեռ երկար տարիներ կպահպանվի հարազատների, բարեկամների, բազմաթիվ սաների ու նրան ճանաչողների սրտերում:

Նմջիր խաղաղությամբ, մեր բարի ուսուցիչ, մաթեմատիկայի խորագիտակ մասնագետ...

Մենք չենք կորսել, կշարունակենք ապրել ու սրբությամբ կատարել մեզ կտակած Ձեր պատգամները:

Ավետարանոցի Ի. Աթայանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԻՄՆԱԳԻՐ՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեքերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 21.12.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: